

Մ Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԵՐԵՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԺԴ. ՏԱՐԻ 1940



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

Ս Ի Ո Ն

ԺԳ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1940

ՍՏՊՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

Նախորդ Խմբագրականով երբ Միոնը իր ուրախութիւնն ու շնորհաւորութիւնը կը բերէր Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան, խորունկ կսկիծով կը մտածէր անդարման կերպով այրիացեալ նկատուած Ամենայն Հայոց Աթոռին: Երջանիկ ու հասկնալի յուզումէ մը վեր զգացումներով է որ կը լեցուն սիրտերը այժմ, ի լուր Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալի հեռագրին Ս. Աթոռոյս Ամեն. Սրբազան Պատրիարքին ուղղուած, որ ուրախութեամբ կը տեղեկացնէ թէ Հայաստանի Ս. Խ. Հանրապետութեան կառավարութիւնը արտօնած է 1940ին Ս. Լեւոնիանի մէջ Եկեղեցական Ժողով գումարել՝ ընտրելու համար Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Գիտենք թէ այս հաւատաւոր պիտի չխանդավառէ հոգիները, ապերախ տարիներու կսկիծէն ու կտակածէն վերադառնա: Գիտենք թէ ուրիշներ նոր սաղարանքներու որոգայթ պիտի նկատեն այս իրողութիւնը, կանխապէս մխիթարուելու համար կարելի յուսախաբութիւններէն: Եւ վերջապէս շատեր քմիծաղով պիտի դիմաւորեն այս ամէնը, անով մեղմելու ցաւը զոր կ'արթնցնէ հոգիներուն մէջ Լեւոնիանի Աթոռին այժմու անփառունակ վիճակը: Սակայն այս բոլորէն աւելի եւ վեր՝ պարտինք առանց պատրանքի կենալ վիճակին առջև, դիմադրաւելու դաշն իր իսկական իմաստովը:

Ստոյգ է թէ մեծ աղէտէն ի վեր, և քաղաքական բերումներու պատճառաւ, Լեւոնիանի Աթոռը տէր չմնաց իր ճակատագրին, եւ հնարաւորութիւն չունեցաւ լիովին կատարելու իր դերը: Միւս կողմէ սակայն Լեւոնիանը չըթեւաբացաւ իր պարտականութեանց մէջ, հակառակ քաղաքական դէպքերու դասաւորման և տխուր անդրադարձումին: Մայր Աթոռոյ մէջ ունեցանք ընտիր հոյլ մը հոգեւորականներու, որոնք ազգային և հոգեկան կեանքի իրենց իրատես ըմբռնողութեամբ իրենց սիրտն ու միտքը ի սպաս դրին Լուսաւորչի աթոռի պահպանութեան, առանց տարուելու քաղաքական հակընդդէմ հայեցողութիւններէ: Եւ այս վերջին իրողութեան մէջն է որ կը յայտնուի Հայ Եկեղեցւոյ ողին: Հայաստանեայց Եկեղեցին հակառակ իր ազգային շեշտուած նկարագրին, ընդու-

նաև չէ եղած քաղաքական դերակատարութեանց: Իր ազգայնականութիւնը կը կայանայ իր ժողովուրդի ցեղային զիտակցութեան պահպանումին մէջ միայն: Այդ սահմանէն դուրս, աշխարհի քաղաքական դրութեանց նկատմամբ Հայ եկեղեցւոյ տեսութիւնը եղած է միշտ աւետարանական՝ տալ «զկայսերն կայսեր և զատուծոյն Աստուծոյ»: Ընդունել կրօնական և քաղաքական մարդերու անջատութիւնը, չճանաչիցնել միմիային, և ճանչնալ քաղաքական կամ պետական կազմակերպութեանց անօրինականութիւնը, իբրև անհրաժեշտ պայման մարդկային կարգի պահպանման:

Իր այս ուղղութեամբ ընթացքին շնորհիւ է որ Հայ եկեղեցին, դարերու տուժանելի այն ճամբուն վրայ՝ որ իր կեանքն ու պատմութիւնն է եղած, կըրցաւ պաշտպանել իր ժողովուրդին ազգային ինքնութիւնը ու բարոյական կեանքը: Տարբեր չէր կրնար ըլլալ իր դիրքը նոյնպէս Հայաստանի ներկայ կառավարութեան նկատմամբ, և այս վերջինը կը թուի հասկցած ըլլալ այս իրողութիւնը. ասոր իբր ապացոյցներ կը սխալեցնեն նկատել իր բարեացակամ կեցուածքը կաթողիկոսական նախորդ և այս ընթացութեանց, Լշմիածինը ընդունելով հայուն ցեղային ինքնութեան պահպանման կարևորագոյն ազդակը:

Այս իրողութեանց ընդմէջէն, և անոնցմէ վեր սակայն կայ այն գերադոյն իրողութիւնը որով բարացուցուած է միշտ առաւելագոյն չափով Լշմիածնի տեղը մեր դարաւոր պատմութեան մէջ. ատիկա իր կրօնական դերէն վերջ, ազգային զերազոյն խորհրդանշանի իր հանգամանքն է: Եթէ Հայաստանեայց եկեղեցին առաջին օրէն վառարանը եղաւ ցեղին իմացական և բարոյական ճրգտումներուն, վկայարանը իր վիշտերուն և իղձերուն, և ներշնչարանը իր ազգային իտէալին, անիկա զերազանցապէս եղաւ նաև այն անանուն խորհրդանշանը, մագնիսը, ուխտի տալանակը եթէ կ'ուզէք, որուն մէջ դեռ կը պահուի իր կորսուած երկրաւոր իշխանութեան զաւազանը, և յոյսին սափորը: Լշմիածինը դարերով հայուն պետականութիւնը եղաւ, առանց պետական իրաւունքի, առանց զօրքի և ոստիկանի, բարոյապէս թաղաւորելով մարմնաւորապէս հալածուած և ընկճուած հոգիներուն վրայ, իր ազդեցութեան շրջանակին մէջ պահելով բախտէն այրիացած սերունդները հայուն: Անիկա կորսուած փառքերու եւ ապագայ երազներու տեսլարանը եղաւ, սերունդներու մտքին առջի եւ հոգիին մէջ բիւրեղացած «Լուսաւորչի կանթեղը»:

Խորհրդագրած այս նայուածքով դիտեց զայն հայը, եւ մարդարեւական այդ տեսանկյունով էր որ յառեցաւ անոր, հակառակ ճակատագրի դառնութիւններուն և յուսախաբութեանց:

Լշմիածինը կրօնական նուիրապետութեան մը կեդրոնը չէ միայն. անիկա հայուն հոգեկան հայրենիքն է, իմանալի այն պարունակը զոր իւրաքանչիւր ժողովուրդ ունի եւ կը ստեղծէ իբրև զերազոյն ամբողջ ոչ միայն իր անցեալին, այլ մանաւանդ ապագային, որուն մէջ կ'երազէ ըլլալ այնպէս ինչպէս որ պիտի ուզէր ըլլալ: Մայր Աթոռոյ այդ դերը չէ դադրած. այսօր աւելի քան երբեք պէտք ունինք այդ տեսլացած՝ հոգիացած խորհրդանշանին, կարենալ վեր բլուսնելու համար մեր ընդարմացած հոգին և փշուր փշուր եղած, ու արտասահմանի բացաստաններուն նետուած մարմինը: Տարիները զոցեցին յոյսին բոլոր դարպասները. ինչ որ երազեցինք ըլլալ վրիպեցաւ մեր ձեռքերէն, ու վերջին մեր

կէս դարու պատմութիւնը տարբեր չէ զայն կանխող գերութեան ու վրիպանքի շրջաններէն: Էջմիածնի այժմու անփառունակ վիճակը պատճառ մը չէ որ անոր յղացքը՝ տեսիլը աղօտի մեր մէջ: Հայ եկեղեցին քիչ անգամ եղած է այն բախտաւոր հաստատութիւնը, զօրեղ այն կազմակերպութիւնը, որուն վիճակուած ըլլար սերունդներ վարելու զործը: Մեր դարաւոր պատմութեան մէջ, մեր ցաւի ու մարտիրոսութեան բովանդակ շրջանին, Էջմիածինը բաժնած է մեր ճակատագիրը, ամենէն առաջ ընդունելով անոր հարուածները. ասով հանդերձ անիկա մնացեր է կանգուն Արարատի ոտքին, և անկործանելի տեսիլք մը մեր հոգիներուն մէջ: Այս մտածումով նայեցան անոր, դարերով, մեր ցեղէն անոնք՝ որոնց նայուածքը զիտցեր է ներկայէն անդին սաւառնիլ:

Տաքնապներ շատ անցուցած է Էջմիածինը, Շահ-Ապասէն սկսեալ մինչև մեր օրերու աէրերը. այդ բոլորին դիմացած է ան և կը դիմանայ ապրեցնելով իրեն յառող հոգիները, եթէ այս վերջիններուն մէջ չմեռնի եւ չաղօտի «Լուսաւորչի կանթեղը»՝ այն հէքեթային ու աննիւթական յղացքը, որ չի բացատրուիր, բայց որ կայ իբրև գերագոյն կամար-զօտի ժամանակէն ընդունուած հոգիներուն վերև:

Այդ է պատճառ որ կաթողիկոսական իւրաքանչիւր ընտրութիւն հայ հոգիները լեցուցեր է միշտ անօրինակ խանդավառութեամբ, անկարելի կարելիութեանց խորին խորհուրդով: Այսօր նորէն ազգը բովանդակ ոտքի է անոր անբիծ յուշքին առջև հոգեկան խոր երկիւղածութեամբ, ինչ որ ալ եղած ըլլան գերակշռող բայց ժամանակաւոր բերումները:

Ինչ փոյթ որ տիրող պայմանները կ'արգիլեն զինք իրազօրծելէ իր գերը այնպէս ինչպէս կը սպասուի դարերու ոյժով և ամբողջ ժողովուրդի մը հաւատքով զօտեպինտ նուիրական հաստատութենէ մը: Էականը այն է որ կայ անիկա: Ապագան ձեռքն է Աստուծոյ, ու աւելի քան ասիկա ճիշդ է, երբ մեր մտածումը կեդրոնացնենք Էջմիածնի խորհուրդին վրայ:

Վարչաձևերը կուգան ու կ'անցնին, մնայունը ոգին է. եւ Էջմիածինը աւելի քան երբեք հոգի եղած է նոյնիսկ այն օրերուն՝ երբ իր կաթողիկոսները շղթայակապ կը պտտցուէին արքունիքէ արքունիք: Խաղաղութեան դար մը անոր դարձուց իր չքեղ դերը. արևելահայաց մէջ ազգային ոգիին գերագոյն վառարանը, ծանօթ է ամէնուս, Էջմիածնի կամարներուն ապաւինած վարժարանը եւ դաւ: Խաղաղութեան ուրիշ շրջան մը, վստահ ենք ատոր, պիտի ընէ զայն ընդունակ դարձեալ սպասարկելու ցեղային հոգիի անմահ խորհուրդին:

Մեր հաւատքն է ասիկա:

ԽՄԲ.



ԳՐՈՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԸ

Քրիստոս յայնչութիւնն է Աստուած — Մարդուն, հասարակ մարդուն և մէկ անձի մէջ միացած երկու բնութիւններու և անոր համար է որ Քրիստոնէութիւնը հոգւում է Աստուած — մարդկութեան կրօնքը: Եկեղեցին մէջն ալ երկու բնութիւններ՝ Աստուած եւ մարդկութիւն, միացած են մէկ գործարանատեղութեան մէջ: Եկեղեցին գործարանատեղութիւն մըն է, աւտուած — մարդկային ընթացք մը, մարդուն ազատութիւնը, գործունէութիւնը, ինչպէս նաեւ Աստուծոյ շնորհքը կը գործակցին անոր մէջ:

Եկեղեցւոյ մէջ միշտ շարժում մը կայ Աստուծոյ գէպի մարդ և մարդէն գէպի Աստուած. այսպէս է որ Եկեղեցւոյ պատմական կեանքին ուժը ի յայտ եկած է: Պէտք է գոյութիւն ունեցած ըլլայ աստուածային ամուր հիմ մը որուն վրայ խաբսխուած ըլլայ քահանայութիւնը, վասնզի ան չի կրնար կենալ մարդկային անհաստատ բնութեան վրայ: Բայց միւս կողմէ Եկեղեցւոյ պատմական կեանքը պէտք է ըլլայ նաեւ զօրաւոր և ստեղծագործ ընթացք մը, ան պէտք է ունեցած ըլլայ նաեւ մարդկային հիմք մը, որ կ'ենթադրէ մարդկային գործունէութիւնը անոր մէջ, ծանօթութեանց եւ բարոյականի փորձառութիւնը, մէկ խօսքով, կեանքի փորձառութիւնը իր ամենալիցուն իմաստով, կարելի է երբ մէկը մասնակից է մարդուն եւ աշխարհի ճակատագրին: Եկեղեցին մարդկութեան և աշխարհի փորձառութեանէն զուրս սկզբունք մը չէ, եթէ անիկա աստուածամարդկային կեանք մըն է, ան պէտք է իր մէջ ունենայ աշխարհի ողբերգական ճակատագրին փորձառութիւնը, և մասնակից ըլլայ անոր: Ասիկա դրական ճշմարտութիւն մըն է որ առարկութիւն չի վերցնիր, և որ ընդունուած է բոլոր յարանուանութեանց աստուածաբաններէ:

Մարդէն գէպի Աստուած շարժումը, որիւ խօսքով ազատութեան և մարդկային

ստեղծագործութեան յայտնուիլը՝ տեսանելի Եկեղեցիին սահմանէն զուրս կը ներկատուի: Շատ մը ստեղծագործ ընթացքներ կը պատկանին միայն անտեսանելի Եկեղեցիին, անոր հոգիին, Աստուած — մարդկութեան կեանքը մասնաւոր կերպով բազադրեալ է, և Աստուած — մարդկութեան ընթացքին շատ մը երեսները չեն իւրացուած Եկեղեցիէն, և չեն նկատուիր անոր իրրեւ մաս:

Քրիստոնէութեան քահանայական տարրն է միայն որ պաշտօնապէս ճանչցուած է: Իսկ մարդարէական տարրը բոլորովին զուրս նետուած է տեսանելի Եկեղեցիէն: Այսպէս մեր կեանքին մեծագոյն մասը զուրս է իր փարախէն և դատապարտուած ենք տարուերուիլ Եկեղեցւոյ և աշխարհի միջեւ: Մեր ամբողջ ստեղծագործ կեանքը կը պատկանի աշխարհին, փոխանակ Եկեղեցիին, վասնզի կարելի է բսել թէ Եկեղեցւոյ սահմանին մէջ է որ ծանօթութիւն ձեռք կ'անցնենք, կ'ստեղծենք արուեստի գործեր, կը խորհրդածենք տիեզերքի գեղեցկութեան վրայ, կ'ազգենք բարոյական արժէքներու և կամ նոր գիւտեր կ'ընենք: Դարձեալ Եկեղեցւոյ սահմանին մէջ է որ ռոմանթիք սէրը կը ծաղկի, ճշմարիտ ազատութիւնը կ'ապրուի, և արդարութիւնն ու ճշմարիտ եղբայրութիւնը կ'իրականանայ:

Այսու ամենայնիւ պէտք է ընդունինք թէ ամէն բան որ կը կազմէ ճշմարիտ գոյութիւն մը, իր կատարելութեան մէջ Եկեղեցիին մաս կը կազմէ, և թէ միայն ոչ-գոյութիւն մը Եկեղեցիէն զուրս է: Մարդոց բոլոր ճշմարիտ ստեղծագործութիւնները կը պատկանին Եկեղեցիին, բառին ամենալիցուն ձակ իմաստով: Խնդիր է գիտնալ թէ մարդը պարզապէս փրկութեամբ կոչուած է թէ ոչ ունի նաեւ ստեղծագործելու առաքելութիւնը: Կեանքի ստեղծագործ ընթացքը անհրաժեշտ չէ հոգիի փրկութեան համար. այլ Աստուծոյ թագաւորութեան և աշխարհի ալակերպման համար է: Դժուար է Եկեղեցւոյ իրական սահմանները գտնել, վասնզի գործնականին մէջ այս խնդրոյն շուրջ անբաւական բացատրութիւններ տրուած են: Եկեղեցիին ճշմարիտ բնութեան յայտնութիւնը կ'ենթադրէ կրօնական մարդակերպարանեայ վիճակին զարգացում մը

և մարդուն կրօնական վարդապետութեան յայտնուելը: Սնդիրը տակաւին բարդ է, անո՞վ որ մարդկային ստեղծումին և գործունէութեան մէջ լինելութիւնը և ոչ լինելութիւնը շփոթուած են, և մեր ամբողջ պարտականութիւնը կը կայանայ դանդաղ և ապա զատելու այն որ առաջ եկած է լինելութենէն, և այն որ արդիւնքն է ոչ լինելութեան՝ աստուած-մարդկային ընթացքին մէջ: Այս շփոթութիւնն է պատճառը այն դժուարութեան՝ որ եկեղեցւոյ գիտակցութիւնը կ'ապրի ճանչնալով մարդկային ստեղծագործութիւնը, և անիկա իր ծագումը կ'առնէ մարդուն ազատութենէն:

Եկեղեցիին մէջ Աստուած-մարդկութեան կեանքին զիւտը կը բխի Նոր Ազամի և Նոր հոգեւոր ցեղին Քրիստոնէական վարդապետութենէն՝ որ, Քրիստոսով կը սկսի: Բայց եկեղեցիին մէջ տիրապետող մտածումի դպրոցը կը ճանչնայ միայն Հին Ազամի դոյութիւնը, և մարդկութեան բնական ցեղը. ան կը թուի անգիտակ ըլլալ այն իրողութեան թէ Քրիստոսով մարդը Նոր արարած մըն է, որուն մէջ Նոր ազատութիւն և Նոր ուժ մը յայտնուած է: Քրիստոսի ժամանակէն սկսեալ սկզբնական մեղքը այլևս բացարձակ իշխանութիւն չունի մարդուն վրայ, վասնզի մարդը և տիեզերքը չեն պատկանիր այլևս միայն բնական իրաւակարգին, բնականին և գերբնականին միջև եղող ընդհատը վերջացած ըլլալով: Հոգեւոր կեանքը և ստեղծագործութիւնը կարելի դարձած է անոր մէջ, և կը պատկանի եկեղեցւոյ Աստուած-մարդկային կեանքին:

Կեանքին ամբողջ ընթացքը տեղի կ'ունենայ եկեղեցիին մէջ, հոն է որ կը ծաղկի տիեզերական կեանքին գեղեցկութիւնը: Եկեղեցիին մէջն է որ Կէօթէի մը և Փոռքի մը ստեղծագործութիւնները ի գլուխ հանուած են, Նիցէէ, Պօէհմ (Boehme) հասած են գիտութեան ճանաչողութեան բարձրագոյն աստիճաններու, եւ ապրած են խաչուած Դիոնիսիոսին ողբերգութիւնը: Եկեղեցիին մէջն է որ մարդկային ստեղծագործութիւնը տեղի ունեցած է: Քրիստոսով մարդը ընդունած է ուժ մը որ աստուածային և մարդկային է միանգամայն, ան եղած է ամբողջութեամբ մարդ, հոգեւոր էակ մը, Նոր և յաւիտենական Ազամը:

Մարդը միայն յայտնուած է Աստուած-մարդկութեան մէջ, այսինքն եկեղեցւոյ մէջ, նոյնիսկ եթէ անդիտակից ըլլայ այս իրողութեան: Կէօթէն, զոր օրինակ, չէր կրնար մտածել թէ իր հարազատ ստեղծագործութեան ամբողջութիւնը եկեղեցւոյ սահմանին մէջ կ'լինայ:

Քրիստոնէութիւնը ընդունելի որպէս կրօնք, միայն անհատական փրկութեան համար, եկեղեցւոյ գործունէութիւնը սահմանափակել է, և մթազնել Աստուած-մարդկութեան ճշմարիտ կեանքը և աշխարհի աստուածային, մարդկային ստեղծագործ ընթացքը: Իրապէս Քրիստոնէութեան այս ըմբռնումը, միայն անուանական է, և կը հակասէ եկեղեցւոյ ճշմարիտ գաղափարին: Քրիստոնէութեան ըմբռնումը որպէս կրօնք, որ կը լուսաւորէ եւ կ'աշխարհաբար անխաբհ, կարող կ'ընէ մեզ ընդունել թէ մարդկային ստեղծագործ կեանքը իրապէս կը պատկանի եկեղեցիին:

Ներկայ դարը յառաջ բերած է աննախընթաց երկուութիւն մը եկեղեցիին և աշխարհին, նուիրականին և ոչ-նուիրականին, կրօնքին և կեանքին միջև. ան լուծած է պատմական այն հին կապը որով Քրիստոնէութիւնը և ընկերութեան կեանքը կը միանային: Այս վիճակը անհանգուրժելի է կրօնական մտածումին համար: Վասնզի Աստուած մարդկային կեանքէն դուրս կը մնայ, և կեանքը չունենար ո՛չ արդարացում և ոչ ալ նուիրականութիւն, սակայն նոյնիսկ այս տխուր կացութիւնը լի է Նոր կարելիութիւններով վասնզի ատոր հետեւանքով է որ Քրիստոնէութիւնը ազատած է կարգ մը հիթանոսական աւանդութիւններէ և Նոր հոգեկանութիւն մը սկսած է աշխարհիս մէջ: Տեսանելի եկեղեցիին մէջ մարդուն հին մեղաւոր բնութիւնը գործի վրայ է և յաճախ իրեն հետ կը բերէ խեղաթիւրեալ Քրիստոնէութիւն մը: Եկեղեցւոյ կեանքին մէջ ապականուած ողբերգական տարրը կուգայ դարձեալ չլուսաւորուած և չքրիստոնէացած մարդկային բնութենէն: Բայց եկեղեցւոյ կեանքին ինչպէս նաև աշխարհի պատմութեան մէջ մեծամասնութիւնը կ'իշխէ փոքրամասնութեան վրայ, այսինքն, մարդկութեան նուազ հոգեկանութիւն ունեցող տարրը կը տիրապետէ անոնց որոնք աւելի հոգեւոր են: Եկեղեց-

և այս հետևությունն մեջ այս գեշ ազդեցությունը մարդկային գործունեության վրայ, ահա-գինքն արգելք մըն է ըմբռնելու անող ստատուած-մարդկային քննութիւնը և անոր մէջ կատարուող և ստեղծագործ ընթացքին ներքին սրբաշուքը:

Նկեղեցին իր քննութեամբ մէկ է անձ-նագործութիւն մը, նման եղանակն իրականութեան մը: Իր տիեզերական հանգամանքին դիտակէց է, և տիեզերականութիւնը զինքը կազմող սկզբունքն է: Նկեղեցին կարծիքի չէ արդէն աշխարհագրական և ազգագրական սահմաններով. անիկա աչ ազգային է, և ոչ ալ արեւելեան կամ արևմտեան: Բայց տիեզերականութիւնը կարելի է հասկնալ զանազան իմաստներով. զոր զինակ, օքսոնականո՞ր բաշխումը ամբողջ երկրագունդին վրայ որ կը պահանջէ արտաքին կազմակերպութեան միութիւնը: Այս իմաստը մասնաւորապէս սիրելի է Հռոմիէական կաթոլիկներուն: Բայց կայ նաև Ռթոթոքսներու յատուկ տեսակետը: Նկեղեցիին տիեզերականութիւնը օրականիս է, և ոչ թէ քանակական: Աւելի խորքի խնդիր է: Տիեզերական նկեղեցին չի պահանջեր արտաքին կազմակերպութեան միութեան հաստատումը: Միութիւնը կրնայ գոյութիւն ունենալ իւրաքանչիւր թեմին մէջ: Տիեզերականութեան այս ըմբռնումը լաւագոյն կերպով կը հաստատէ նկեղեցիին միացնելու և տիեզերական ըլլալու հանգամանքը հակառակ իր արտաքին բաժանումներուն: Մարդուն և բնական աշխարհին մէջ նկեղեցին միայն կրնայ անհատականանալ, և ասիկա լաւ բան մըն է, բայց ան կը դանդաղ նաև բաժանուած աններդաշնակ վիճակ մը մէջ, և ասիկա գէշ է և մեղք: Նկեղեցին բաժնուած չէ ո՛չ մարդկային և ոչ ալ աստուածային ճշմարտութեան տեսակէտէն: Այլ մարդոց կողմէ՝ որոնք անկարող եղած են ընդունիլ Քրիստոնէութեան կատարելութիւնը, և որոնք իւրացուցած են միայն ճշմարտութեան պատուիրներ, Բաժանումներ գոյութիւն ունին Կեսարի թագաւորութեան մէջ, վասնզի միայն Աստուծոյ թագաւորութիւնը կրնայ մի ըլլալ: Չանաղան յարանուանութեանց մէջ գոյութիւն ունեցող հակառակութիւնները Կեսարի թագաւորութեան մէջ եղած թշնամութեան

նմանութիւնը կը բերեն: Ինչպէս նաև այն մարդոց որոնք ենթարկուած են այս բընական աշխարհին: Միւս կողմէ հոգեւոր աշխարհին ծանօթ չեն այս թշնամութիւնն ու բաժանումները, բայց հոգեւորը տկար է այս բնական աշխարհին մէջ:

Այս տեսանկի աշխարհին մէջ Նկեղեցիին արտաքին միութիւնը գոյութիւն չունի, իր տիեզերականութիւնը կատարելապէս չէ իրականացած: Ոչ միայն Նկեղեցիներու բաժանումները, Քրիստոնէութեան յարանուանութեանց բազմութիւնը, այլ այն պարզ իրողութիւնը թէ կան տակաւին ոչ Քրիստոնէական կրօնքներ աշխարհիս մէջ, և ասկէ զատ հակաքրիստոնէական աշխարհ մը գոյութիւն ունի, կ'ապացուցանէ թէ Նկեղեցին տակաւին կարելիութեան վիճակի մէջ է և իր իրականացումը դեռ անկատար է: Կատարելապէս Քրիստոնէացած մարդկային ցեղ մը և տիեզերք մը միայն կրնան արտայայտել Նկեղեցւոյ տիեզերական նըկարագիրը: Քրիստոնէացման այս ընթացքը միայն մասամբ իրականացած է: Նկեղեցւոյ տիեզերական ճշմարտութիւնը տակաւին ծածկուած կը մնայ, և սոսկ անոր բաժանումները կը տեսնուին: Միայն մասը ամբողջին նմանցնելով է որ Նկեղեցւոյ տիեզերական միութիւնը կը հաստատուի:

Նկեղեցիին չէ որ կը պակսի միութիւնը, այլ այս աշխարհի թագաւորութեան, վասնզի ինչ որ կը պատկանի Աստուծոյ, և ինչ որ կը պատկանի Կեսարին, չիոթած են պատմութեան ընթացքին մէջ: Նկեղեցւոյ բաժանումը առաջ եկած է այնպիսի շարժառիթներէ, որ Կեսարի աշխարհին յատուկէ, գոյութիւն ունին կարգ մը շարժումներ միութեան համար, որոնք սակայն կ'առաջնորդուին նման սկզբունքներէ: Թէ և մարմինը և արիւնը կը բաժնեն, սակայն միայն հոգին է որ կրնայ միացնել: Մինչև հիմա Նկեղեցիները միացնելու ծրագրներուն մեծ մասը «կեսարապաշտական» են, և հետեւաբար անօգուտ և փնասակար: Այս ծրագրներով չէ որ պիտի իրականանայ միութիւնը, այլ հոգիով և Ս. Հոգւոյն ներգործութեամբ:

Արեւելեան և Արեւմտեան Քրիստոնէութիւնը պէտք է զանազանուին ոչ թէ վարդապետութիւններով, և Նկեղեցական կազմակերպութեան տարբերութեամբ, այլ ի-

րենց հոգևոր փորձառութեան նկարագրով, արդիւնք զանազան տեսակի մարդոց ուրոնք ընդունած են Քրիստոնէութիւնը և խեղաղւրած դայն: Հոգևոր փորձառութիւնը աւելի խորունկ բան մըն է, քան վարդապետութիւնը, որ կը կանխէ դայն ժամանակով: Եկեղեցւոյ կազմակերպութիւնը կախուած է ազգերու կեանքի հոգևոր ուղղութենէն, տարբերութիւններու այս առաջին և կենսական նկարագիրն է որ որոշած է Արեւելքի և Արեւմուտքի զարգացումը:

Հոս կը ներկայանան Քրիստոնէական աշխարհի երկու հոգևոր ուղղութիւններ, որոնց գոյութիւնը նախասահմանուած է Աստուածային ծրագրով աշխարհի պատմութեան համար: Հոգևոր փորձառութեան կենսական տարբերութիւններ յայտնուած էին Եկեղեցիներու բաժանումէն առաջ: Քրիստոնէութիւնը պէտք է ատակ եղած ըլլար գոյութիւն ունենալու զանազան ձեւերով՝ տիեզերական Եկեղեցիին մէջ:

Արեւելեան հայրերու գրուածքները յաճախ շատ յստակ կերպով կը զանազանուին արեւմտեան հայրերու գրութիւններէն: Արեւելքի մէջ պղատոնական աւանդութիւնը մնաց միշտ զօրաւոր, ան աւելի խորհրդապաշտական էր. իր շահեկանութիւնը էականական և հայեցողական եղաւ: Վարդապետութիւնը մասնաւորապէս իր զարգացումը կը պարտի Արեւելեան Եկեղեցւոյ վարդապետներուն: Արեւելքի մէջն էր որ երեան եկան Պնոստիկները և բոլոր հերետիկոսները. այս իրողութիւնը կը հաստատէ այն անսահման շահեկանութիւնը զոր անոնք ունէին վարդապետական և կրօնաբանազանցական բնոյթ ունեցող խնդիրներու նկատմամբ: Որոգինէս մը կամ Ս. Գրիգոր Նիւսացին բնաւ չէին կրնար ելլել Արեւմուտքէն ուր ստոյիկեան աւանդութիւնները և հռովմէական օրինապաշտութիւնը կը տիրապետէին: Արեւմուտքի մէջ հետաքրքրութեան առարկայ նիւթերն էին Եկեղեցւոյ կազմակերպութիւնը, շնորհքի, ազատութեան եւ փրկութեան հարցերը: Արեւմուտքը Ս. Օգոստինոսէն զատ խորհող չէ տուած: Արեւմուտքը նշանաւոր մատենագիրներ տուած է, որոնցմէ Տերատուղիանոսը և Յերոնիմոսը ամենէն կարեւորներն են:

Արեւելեան Քրիստոնէութեան համար

հիմնական հարցը եղած է բնութեան, աշխարհի և մարդուն աշխկերպումը: Եւ այս կապուած է աւելի տիեզերական նկարագիր ունեցող Քրիստոսի երկրորդ Գալստեան եւ Յարութեան հետ: Արեւելեան Եկեղեցիի վարդապետները Կղեմէս Աղեքսանդրացի, Որոգինէս, Ս. Գրիգոր Նիւսացի, Ս. Գրիգոր Նազիանզացի և ուրիշներ, ինքնաբերաբար պիտի չմշակէին Քրիստոնէութիւնը որպէս անհատական փրկութեան կրօնքի մը գաղափարը, ոչ ալ զբախտի մէջ ընտրեալներու երանութեան և մարդկային ցեղին մշակութեան և մարդկային ցեղին մշակութեան վարդապետութիւնը: Արեւելեան մտածումը նուազ հրապուրիչ գտած է արդարացման և փրկութեան գաղափարը քան աշխկերպման և աստուածացման մշտնջողութիւնը:

Արեւմուտքի մէջ կաթոլիկներուն եւ առաջին բողոքականներուն համար կենսական հարց եղած են արդարացումի, գործքով և հաւատքով փրկուելուն խնդիրները, և փորձը սահմանելու այն դերը զոր աղատութիւնն ու շնորհքը ունին փրկութեան գործին մէջ: Ահա թէ ինչո՞ւ հեղինակութեան ստուգանիչին հարցը այնչափ կարեւորութիւն ստացած է. այս ամենուն մէջ կայ փրկութեան իրաւական եւ ընկերային ըմբռնումը: Այս հարցը բնաւ մասնաւոր շահեկանութիւն մը պիտի չ'ստեղծէր արեւելեան աստուածաբանական շրջանակներուն մէջ: Երբ ուղադրութիւն կը հըրաւիրուի հեղինակութեան ստուգանիչին վերայ, ան կը հաւաստէ թէ բնութիւնը չէ աշխկերպուած, թէ՛ ան բաժնուած է Աստուծոյ և հակառակ է Անոր: Բնականը զատուած է գերբնականէն, և ան չէ աշխկերպուած և ոչ ալ Քրիստոնէացած: Եւ արտաքին միջոցներով պէտք է կարգ ու կանոնի ենթարկուի:

Ամփոփեց
Ս. Վ. Մ.

Ն. ՊԵՐԴԻԱԼԷՎ



Ս. Կ Ո Յ Ս Ը

(ՎԵՐԱՓՈԹՈՒՄԱՆ ԱՌԻԹՈՒՄ)

Կլինք՝ որուն Վերստիգաման չիշատակին է որ կը տանենք, ամենէն խոսարէ, ինչպէս խորհրդաւոր և ուրբը կլինն է մարդկային պատմութեան, ան՝ որ սակի ստիորը եղաւ նրկնային մանանային, և տաճարը լոյսին, ան՝ որուն շնորհիւ կլինը իրական սրտէքի մը բարձրացաւ, և ունեցաւ իր տեղն ու շերքը մարդկային քաղաքակրթութեան մէջ: Կլին շեշտեմ՝ այս վերջին պարագան, վասն զի քրիստոնէութենէն առաջ կլինը մարդուն հաւատարմութեան զօրութիւն մը չէր նկատուել, իր ուրոյն ճակատադրին ու գերին ասմանուած, այլ ասարկայ մը վայելքի և հաճոյքի, հակառակ իր բոլոր արժանիքներուն և հանգամանքներուն:

Ոչ ոք էր կրնայ վիճակը հեթանոս աշխարհի մէջ. Աթէնք և Հռոմ մ՝ հին քաղաքակրթութեան երկու մեծ ուստաններ, իրենց ամենէն փայլուն շրջանին իսկ բացառութիւններ չէին:

Հին գերմաններ որոնք ամենէն շատ կը յարգէին իրենց կլները, ինչպէս Կրիսէ Տակիտոս, կը ծախէին, կը ծեծէին և կը լքէին դանոնք իրենց բախտին: Զինաստանի մէջ կլները կը նկատուէին հոգիէ զուրկ արարածներ, և չէին կրնար աղօթել մեհեաններու մէջ, ու պարտաւորուած էին պաշտել իրենց ամուսինները: Հնդկի կլները դատապարտուած էին գերեզմանուել ողջ ողջ իրենց մեռած ամուսիններուն հետ:

Իմաստասիրական դրութիւններն ալ կը ձայնակցէին այս անարգ կերպին. Պիւթագոր իր արժէքներու դասաւորման տախտակներու վրայ կլները յոռի իրերու կարգ կը դասէր, իրբու մարդկութեան ստորնագոյն մասը. նոյնպէս պղատոնական հոգեփոխութեան մէջ երբ մարդը մեղանչէր, կը փոխուէր կնոջ, երբ կլնը մեղանչէր, կը փոխուէր անասունի: Իսկ սեմական ժողովուրդներու մէջ կլնը երբեք հաւասար նշկատուած չէ մարդուն:

Այսպէս՝ կլնը հին աշխարհի մէջ, բարոյական, կրօնական, և իմաստասիրական հայեցակէտերով, կը նկատուէր առարկայ մը, միջոց մը, մարդկային ընկերութեան ստորին և չնչին մասնիկը: Այս վիճակը տակաւին

այսօր կ'երկարաձգուի ոչ քրիստոնեայ ժողովուրդներէն ոմանց մէջ, կազմելով կեանքի ամենէն ախուր ողբերգութիւններէն մին, խոցի մը պէս բացուած ընտանեկան, և անոյ՝ մարդկային ընկերութեան բարոյակաւնին վրայ:

Քրիստոնէութիւնը սրբազրեց այս մասնուած, և բարձրացուց կլնը, ներմուծելով մարդկային քաղաքակրթութեան մէջ ատակ ու կենսունակ ոյժ մը. և չէր կրնար այսպէս չընել, վասնզի քրիստոնէութեան ոգիին և պահանջներուն, և կնոջ ներքին արժէքներուն միջեւ կային երջանիկ հանդիսութիւններ, որոնք զիրար կը լրացնէին, որոնք իրարմով կրնային ըլլալ ինչ որ եղան:

Կլնը օժտուած էր նուիրումի, սիրոյ, հեղութեան, հնազանդութեան և քաղցրութեան շնորհներով, և քրիստոնէութիւնը իր խորքին մէջ սէր, նուիրում, և քաղցրութիւն է, զի Աստուած սէր է, և կլնը հրաշալի անօթը եղաւ սիրոյ կրօնին՝ քրիստոնէութեան:

Ս. Գրքէն մեղի ծանօթ է կնոջ դերը այս մարդին մէջ. Յիսուսի շուրջ առաքելոց դասուն հետ համընթաց կազմուեցաւ առաջին օրէն կանանց խումբը, որոնք մինչ և Գողգոթա բարձրացան, (մինչ մարդերը խուսափեցան), և սիրոյ Մեծ կրօնին սիրոյ սպասը բերին յանուն ապագայ մարդկութեան: Լսեցին կսկիծով խաչեալին վերջին խօսքերը, և յարութեան վաղորդայնին եղան լոյսի աւետաւորներ Պաղեստինի եւ ամբողջ աշխարհի մէջ: Հեթանոսները կը հիանային քրիստոնեայ կլներուն վրայ:

Քրիստոնէական կրօնի մարտիրոսագրութեան մէջ, մեծ է փաղանգը սրբուհիներու, որոնք երկնքի ճամբուն վրայ և լոյսին մէջ այնքան զեղեցկացան, որոնք իրենց անարգ անօթը նախ կրակի, ապա ագամանդի վերածեցին: Մեր կրօնի սուրբերու մեծ մասը կլներէ կը բաղկանայ, այս պարագան կը բաւէ ճշգիւլու կնոջ դերը և իրեն եղած շնորհին լիառատ հատուցումը քրիստոնէութեան:

Յետոյ բոլոր կրօնները իրենց նպատակ ունեցած են նաև նորոգել մարդկային բարոյականը, անով դիւրացնելու և փութացնելու մարդկային յառաջդիմութիւնը. և քրիստոնէութեան մեծ նպատակներէն մին է ասիկա: Բարոյական վերանորոգումը սակայն կը սկսի օճախէն, և ասիկա իրագործելու համար անհրաժեշտ է որ կլնը ախ-

բապետէ և աւանդապահն ու խնամակալը ըլլայ տունին: Օճախին սրբութիւնն ու աստուածացումը առաւել կամ նուազ չափով նուիրական եղած է բոլոր կրօններու մէջ: հեթանոսութեան մէջ անոր քուրմը նահապետն է, քրիստոնէութեան մօտ՝ կինը:

Յետոյ՝ կինը մայր է առաւելապէս. սակայն չի բաւեր մայր ըլլալ, անհրաժեշտ է վայելել մայրական իրաւունքներն ու իշխանութիւնը: Քրիստոնէութեան մէջ կինը իրեն մայր կը վայելէ յարգանքէ աւելի բան մը, վասնզի կինը եղաւ մայր քրիստոնէութեան հիմնադրին, և բնակարանը Աստուծոյ, և մայրօրէն հսկեց անոր օրբանին, և անով՝ քրիստոնէութեան օրբանին քով:

Կինը իրենէ մայր երկրորդ աստուածն է մարդկութեան, իրմով և իր մէջ մարդկային ցեղը կը մշտնջենաւորուի, իր բազուկներուն վրայ և իր շունչին ներքե կը մեծնայ ապագայ մարդը: Ամէն ինչ մայրական է կնոջ մէջ, և այդ նպատակին, այդ վախճանին կը միտի: Մօր դերը անհաւասարելի է սերունդներու դաստիարակութեան մէջ և վճռական, այդ հանգամանքով կինը մեծագոյն գործիչն էր քրիստոնէական բարոյականին, և եղաւ: Կիներ եղան առաջին հաւատացեալներ, մեծագոյն քրիստոնեայ ուսուցիչներ տուններէն ներս, կիներ եղան մեծագոյն պահապաններ, և պահպանեցին քրիստոնէութեան գանձը, անոնք եղան նաեւ քրիստոնէական կրօնի լաւ հաղորդիչներ, և զայն փոխանցեցին:

Այս բոլոր առաքինութեանց մարմնացում եղաւ Ս. Կոյս, իրեն հաւատացեալ, իրեն մայր, և իրեն դաստիարակ, և տուաւ իր ոգիին զրոյմը Աստուածորդոյն. հետեւեցաւ իր Զաւկի մեծ ճակատագրին, և բամբակեց անոր տառապանքը Մսուրէն մինչև Գողգոթա:

Քրիստոնէական քաղաքակրթութեան մէջ կիներու մուտքը, և անոնց բերած բաժինը Ս. Կոյսին կը պարտինք առաւելապէս:

Վերափոխումը Ս. Կոյսին, պանծացումն է այս բոլորին, վասնզի Ս. Կոյսը մարմնացումն է այս բոլորին: Վերափոխման տունը մեզի այս աշխարհի և անդենականի մասին մտածել տալէ առաջ, մեր միտքը կը տանի կնոջ վերափոխման՝ հեթանոս վիճակէն քրիստոնեայ վիճակին:

Քրիստոնէութեան մէջ կինը կը վերափոխուի, նոր դիմ ու գոյն կը ստանայ, նոր դեր և պարտականութիւն կը ստանձնէ, ըլլալով ժրջան անտեսը երկնքի թագաւորութեան:

Իր այս աշխարհի գերեզմանը բացուելէն, և իր երկինք վերափոխուելէն առաջ, ան իր գերութեան և նուաստութեան գերեզմանէն հանեց կինը իր այժմու վիճակին բերելու համար: Առաջին վերափոխումը եղած է կնոջ հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն, և այս՝ Ս. Կոյսին շնորհիւ:

Խորունկ մեծարանքը հանդէպ Ս. Կոյսին եղած է ընդհանուր, Քրիստոնէական առաջին դարերէն ի վեր: Զարմանալի է որ անոր մարմնոյն վերափոխման հրաշալի աւանդութիւնը առանց ունէ կասկածի ընդունուի քրիստոնէական եկեղեցիէն, և օծնը կատարուի մեծ շուքով ամէն տարի:

Այդ աւանդութիւնը սիրելի է մեզի աւելի, քան համար մանաւանդ՝ վասնզի խորունկ ուսուցում մ'ունի իր մէջ: Ան՝ աստուածացումն է պարկեշտութեան, մաքրութեան, խոնարհութեան, սրբութեան եւ մաքուր կուսութեան:

Առանց Հոգիմէական եկեղեցւոյ չափազանցութեան մէջ ինչպիսի, Հայ եկեղեցւոյ սրբազան երգիչներուն համար Ս. Կոյսը ներշնչարան մը եղած է բանաստեղծական գեղեցիկ թռիչքներու:

Մովսէս Քերթոզ, Շնորհալին, Նորեկացին և ուրիշներ, ներշնչուած տողերով ներբողած են առաքինութեան մարմնացում եղող այս կինը, որ փրկիչ մը ծնաւ աշխարհին, գերազանց տիպաբը հանդիսանալով մաքրութեան, սրբութեան, անմեղութեան:

«Մեծացուցէ» շարականները զոհարներդներ են ի պատիւ Աստուածածնի, և ճաղարանը լեցուն է անոր ձօնուած անոյշ տաղերով: Ու Հայ ժողովուրդը, և հայ կինը մասնաւորապէս պաշտանք մ'ունին Աստուածամօր հանդէպ, եւ ասիկա թերեւս իր առհաւական պատճառները ունի: Հեթանոս հայութիւնը երկու հազար տարիներ ամուր բռնած էր կուսամայր Անահիտին հաւատքը իրեն «մայր ամենայն զգաստութեանց»: Կնոջ հանդէպ Հեթանոս հայութեան հոգեկան և ընկերային կեանքի խորքին մէջ սնուցուած այս կարգի բարձր գաղափարական մը՝ ամենազօրաւոր ազդակներէն մին պիտի ըլլար մեր մէջ քրիստո-

նշակաւ կրօնի նուաճումներուն, կնոջ բարձրացման, և Ս. Կոյսէն թերութեամբ որտա՛նուէր յարգանքին: Զարմանալի չէ որ էջմիածնի տաճարը, Հայաստանի ամենամեծ և առաջին եկեղեցին իր չորս մասունքներով Լուսաւորչի տեղիքին համեմատյալ կառուցուած, կրնայ նուիրուած է: Մեր հնգյակն էր իր մայրապալատ եղած էր, և եղաւ մեծաւանդ քրիստոնէութենէն վերջ:

Առաջին դարուն մեր մէջ հայ արդէն Աստուածածնայ պաշտմունքը, Բարթաղիէն առաքելի միջոցաւ ներմուծուած է. Կոյսի պատկերին շնորհիւ. յատկանշական է նաև պարսկական նախաձեռնող նախաձեռնող Կոյսին: Միջնորդ շարորդ դարուն միայն քրիստոնէայ եկեղեցին կը նախնայ Ս. Կոյսին տունը, մեր մէջ առաջին դարէն տն յարգանքի տարակայ է: Իրական սենին թերութեամբ այս յարգանքը հայ աղին ձայնն է որ մեր պատմութեան առաջին օրէն մինչև վերջ իրեն քաղցրութեան և դժգոհութեան գերազանց գանգակ լսելի եղած է մեզմէ մեզի:

Քրիստոնէայ ժողովուրդներէն ոչ մէկուն պատմութեան մէջ կինը ունեցած է այն կարեւոր դերը, զոր ան ունի մեր մէջ: Դարուն քրիստոնէական կրօնի մեր մէջ պնտակոնացման նախօրեակին, Լուսաւորչի և Տրդատի դորձակից են երկու կիներ, Անիէն Տէկին, և Խոսրովապետը, որոնք մասնակից են նաև աշխարհաժողովին: Իշխաններէ առաջ կիներու հանգէպ ցոյց տրուած այս լայնամտութիւնն ու յարգանքը՝ մեր ժողովուրդի հոգեկան դարաւոր ապրումէն կուգայ:

Հայ կինը և հայ մայրը քրիստոնէական կրօնի լոյսին մէջ աւելի զեղեցկացան, և սրբութեան ու առաքինութեան շնորհներով պսակեցին իրենց անձն ու գործը՝ իբրև նահատակ, իբրև մայր, և մանաւանդ իբրև աւանդապահ: Հայր ուշագրաւ ինքզինքը պաշտպանելու գործին մէջ, Հայ կինն ու մայրը հերոսութիւններ եղան գոյութեան այս պայքարին:

Վարդանանց կրօնական և ազգային դոյաւարտին յաջորդող ոգեկան ու բարոյական լքումի և կոպտո նիւթապաշտութեան օրերուն, երբ ամէն ինչ կրնար ծախուիլ կտոր մը փառքի և հաճոյքի, մեր նորաբոյս մտքի և հոգիի նշխարհներու գերա-

զոյն աւանդապահները եղան կիներ, և արժանացան եղիշէի ներքողին: Իսկ իբրև մայր, դարձեալ իրեն նմանը չունի հայ կինը: Մեր մեծագոյն փառքերուն՝ Ներսէսներու, Վարդաններու, Վահաններու և Աշոտներու վրայ մեր հիացումներու և գրուածքներու պարագային, քիչ անգամ կ'անդրադառնանք այդ արժէքները մեզի ընծայող հայ մայրերուն: Պէտք չկայ ըսելու թէ մեծ եղած է իր մասնակցութիւնը ընտանեկան, ընկերային, բարեգործական և նոյնիսկ քաղաքական բոլոր առարկէջներում: Մեր պատմութեան և մեր արժէքներու հաշուեկշիռին մէջ արդար և լրիւ ցուցուած չէ տակաւին հայ կնոջ դերը, և դժուար անոր զեղեցիկ պատկերը: Ատիկա կարելի է միայն երբ օր մը գրուի հայ հօգիի քաղաքակրթութեան պատմութիւնը: Սակայն այն չի կրնար գրուիլ ոչ միայն մեր այլ բովանդակ աշխարհի մէջ, որքան ատեն ի պատուի չեն հոգեկան այն յատկութիւնները որոնք կնոջն եղան, հեղութիւն, հնազանդութիւն, զոհողութիւն, սէր և սրբութիւն, և որոնք այնքան մեծ տեղ ունին Աւետարանին մէջ: Բիսուսէն առաջ յարգուած առաքինութիւնները մասնաւորաբար այրական էին, քաջութիւն, իմաստութիւն, ճշմարտութիւն և ոյժ, կարողութիւններ որոնք հակամէտ են իրենց ծայրայեղութեան մէջ խախտել մարդկային հոգիի և քաղաքակրթութեան կշիռը: Աւետարանը յեղաշրջեց զանոնք, և անոնցմէ վեր դրաւ արժէքներ՝ որոնք առաւել քան կանացի են, շեշտուած այրերէն աւելի կիներու մէջ:

Տխուր բան է նշմարել մեր օրերուն խախտիլը կնոջ յատուկ առաքինութեանց տախտակին. այսօրուան կինը այրական ըլլալու իր սխալ ձգտումին մէջ կը վնասէ ինքզինքին ու ընկերութեան: Յուսադրիչ է սակայն կարգ մը բարոյագէտներու և բարեկարգիչներու ճիշդ, կինը իր նախկին վիճակին վերադարձնելու, և ատուք բուժելու կնոջ այս շեղումէն յառաջ եկած հոգեկան և ընկերային փոփոխութիւնը:

Ս. Կոյսին տունը մեր միտքը պէտք է տանի կնոջ առաքինութիւններուն և դերին, որոնց աննման տիպարը եղաւ Ս. Կոյսը, և կենդանի տաճարը Աստուծոյ փառքին:

ԵՂԻՇԷ՛ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԵԿԱՆ

ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Եղեգնայ գրչով երգեցի վերեր
Ընդ եղեգան փող սիրս ելաներ:
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Եկայ քեզի, երկիւղած, աչքերուս մէջ փամած սիրս,
Ու ցաւին տակ նայուածքիս, զրտայ կայտառ մեծ եղբայրս
Որ կ'երազէր լուսաւոր ապագայի յաղթանակ...
Մինչ ձեռքին մէջ կը բռնէր յոյսի ծաղիկն սպիտակ:

Հիմա՝ կըմախփ մը միայն, այդ պատկերէն զեղանի,
Դժնիկի խօլ անուամբ ծրլած հեղճանքը կեանքի,
Աչքերու տեղ՝ ժամանակի վերքէն բացուած մուր փոսեր,
Ու... Հաւաստի քելէն կախ կանքեղի լոյս արցունքներ...:

Զրմուցրած ցաւերու ներկայութիւն մ'է հիմա
Յուշարձանն այս՝ երկէն վազուան իշնող համբուն վրայ,
Ուր շատ սիրուած անուններ զանկերու մերկ բաժակէն

Հոգիիս մէջ, ըսեղծիչ իրենց հոգին կը պարպեն,
Սուգես երգեր ծնելու, եւ պատմութեան եղեռնի
Գեղեցկութիւնը տալու եղբայրներուն իմ մտքի:

Երուսաղէմ, 1940

ԱԻԵՏՈՒՄ

Ա Պ Ա Գ Ա Ն

Այն տեսն երբ կեանքը դեռ հանոյք ու ցաւ էր միայն,
Ինձի համար ապագան հեռանքլար մ'էր փառքամ,
Անձանօթին հրմայնովն ու սարսուռովն ալ տարտամ,
Որ կը յուզէր զիս յանախս, կը հրնուեցնէր ալ սակայն:

Հրմայաբափ, անկենդան բառ մըն է լոկ հիմա ան,
Իմաստութիւնն երբ մեռցուց ամէն երազ ու խօլ յոյս,
Երբ հանոյքին ու ցաւին ուսայ լեզուն բընակուն,
Ու վախճաններն ըստ ինքեան եղան դիւրանքն իմ հոգւոյս:

Պիտի ընդ միւս բօրափեմ ա'լ տիրութիւնը արիս.
Ու յէտ այսու, ջրլապինդ, պիտի փալեմ բարձրավիզ,
Ջահած հոգիս միւս լոյսովն իմաստութեան անասան,

Այն ուղիէն որ տանէր Գաղափարին անվախճան...
Ուղի'դ ըլլար կեանքս, ինչպէս հառազայքը՝ ամբասիր,
Ու իր ոսկին ամենո՛ւն տար, ամենո՛ւն անխրսիր...:

Ն. ԿԱՏԱՐ

ԳՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻՆ ԷԵՏ

ՍԱՐԿԱՍՊՆԵՐՈՆ

Յիշանք բարձր, չուրացում արեւ:

Յիշ, անդառնա, թրթռադին սեկնջուրի մը
 Ժպտանքներովը կը դողայ պատկաններուն:
 Կը փշուռի դաւուի պատին ու նորաների սե
 տախտակի պէմքին: Ինչիկներին ուսով հո'ւ
 մը որ կը պզգի: Դառարանին մէջ նոր հով:
 Ու աչք պնդուած, գրեթէ գոտարթ դեղ-
 նաթեան մէջ պոխսան:

Անկրկնատ: Անհամաշխարհ: Անարտայայտ:
 Կը կը կենան: Ա՜նպիսի իրոք: Իայց բու-
 չարին աչք պնդանաւ խոյն, բարակ, ը-
 սնոս աչնան Ժպտանքովը անոնց նայումը:
 տաք, չույն, պիւ, բարի, հա՛յ:

Ժպտանքովը անհամաշխարհ: Կը պոխսան
 քանդ: Զարեկներ:

* * *

Կը մտնեմ ներս:

Երանց դէմքին, միամիտ սպասումը որ
 կը վախնայ աւելին ըլլալէ:

Մ'զ գիտէ, ինչիւր լսած են անոնք, տա-
 կաւին ոտըր երկիր չմտած, անոր երանքնե-
 րէն: Երեսպաղէմը աղոց ատաջին ստեղծա-
 դործութիւնն է: Ու, վտտահ եմ, հիմա կը
 տառապին անոնք, իրենց շինածին, լսածին
 ու տեսածին մէջտեղ բացուող անդունդէն:

Տարին կը փնտռեմ անոնց վրայ: Գրեթէ
 չունին. այնքան կիանքը տարբեր կը զրուի
 մեր մանուկներուն ճակտին: Տրտում են ու
 վերապահ: Կը զգամ անգիտակից իրենց
 քանքը, իրենց մարմինը անզգալի ընելու,
 «ջնջելու»: Չգիտտին մատնութիւնն է ատի-
 կա, եղիւր եմ իրենց պէս: Ու չեմ կրցած
 մոռնալ որ կը տառապէի իմ գեղջուկի լա-
 թերուս վրայ, ուրիշներու նայումքէն:

Կը հարցնեմ, կամաց, գրեթէ վախով:

— Չի ճանչնար հայրը, մայրը: Այս բա-
 ւերը որ եւէ վէտ չեն շիներ իր դեղնաւուն
 երեսներուն: Ու ահաւոր է ասիկա, իր տա-
 րիքին: Չունի, չի գիտեր քոյր, եղբայր,
 մօրքուր, հօրաւ: Այնքան խոր, իրաւ այս
 պատկերները չեն փախած իր մանկութեան,

առջի պատանութեան կերպընկալ պատա-
 ոին վրայ: «Գեանէն բուսած» կ'ըսէին ա-
 սոնց մեր հէքիաթները: Կը պատասխանէ
 պարզ, բնական, արագ, իր բառերուն ի-
 մաստը առաջուց արդէն հերքած ըլլաւուն,
 իր մանկութեան դժոխքէն իսկ: «Մեծցե-
 ւ ինձ իրեն», կը դատեմ մտովի: Ու ինքը
 միայն գիտէ զինը իր ոսկորներուն, ծուէն
 ծուէն ճարուած, խլուած ամենօրեայ ան-
 թութեան մը ճիրաններէն: Անհանգարտ իր
 աչքերուն ներքը առնուազն մոխիրը տաք
 տարիներու, ուրիշներու համար ազամանդ
 մանկութեան ու պատանութեան: Միակողմ
 որբութիւնն է անիկա, փողոցը, զրկանքը:
 Հրաշք մը զինքը ազատած է սակայն: Ա-
 նիկա ժամուն բակը ինկեր է օր մը ու հոն
 ապրող կատուի ձագին հետ կերպ մը դտեր
 ապրելու: Մի՛ բարակը փնտռէք: Դրկած
 են զինքը հոս: Մարդ ըլլալու:

— Կարծր, խարդած մորթով դաժան
 տղայ մըն է: Չես գիտեր ինչ բանի տուած
 է թարմութիւնը, ողորկ ու քաղցր բանը
 որ աղոց մորթն է իր տարիքին: Ծեր մը,
 առանց կնճիւղի: Ամուր: Իրաւ: Հաստատ
 ու բիրտ: «Սալի վրայ շինուած», ինչպէս կը
 պատկերեն մեր ծերերը նման կաղմուած ք-
 ները երբ կը դատեն, դասուորեն: Անշուշտ
 աս ալ անօթութեան սալն է: Անոր անձին,
 ձայնին, շարժումներուն մէջ ամէն ինչ
 խիստ, կարծր, վերաւորիչ կը թուի ինձի:
 Տառապանքին փուշերն են ասոնք մեր հո-
 գիւն վրայ որ կը ծակեն մորթը ու կը նային
 աշխարհին: Իր նստիլն իսկ կարծրացում մըն
 է, մշտահաւած երէի մը նման որ մոռցած
 ըլլար վարժութիւնը հանգիստին: Կը զի-
 տեմ որ չի կրնար խնդալ, հակառակ ուղե-
 լուն, քանի որ շրթները կը ծռին նման փոր-
 ձի մը ասեմ: Արցունքը մեր դէմքը կը շինէ
 երբեմն իր օրէնքներով ու զայն կ'ընէ ա-
 նատակ ուրիշ պատկերի: Չի կրնար թուի-
 նալ: Պիւրկ, բոցուած, հետ, ու՛ գիտէ քանի
 տարի կայ: Մայրը պահեր է գիրենց: Այդ
 իրենցը՝ քոյրեր, եղբայրներ որոնց մասին
 ժլատ բառեր միայն ունի: Ուշադրաւ՝ իր
 բացակայութիւնը իրմէ: Պատասխանները
 տեսակ մը փախուստով կ'ըլլան երբորդ
 դէմք ու կը խօսին իրենց տունէն: Անիկա
 կը լուէ իր հօրմէն, խոր ու խորհրդաւոր
 սառնամով մը: «Չեկող» այս հայրը կը խը-
 ոովէ զիս, բայց կը զգուշանամ: Տղու մը

հոգիին վերև մայր մը պայծառ է միշտ: Համբար մը: Հարցուցէք ու մի խորանաք: . . . Դէմն է սակայն դաժան, կարծր, բութ: Եկած է մարդ ըլլալու:

— Բարակ, բաց, աշնան արեւէն աւելի տաքոյն: Մանուկ մըն է գրեթէ, հակառակ տարիքին: Ամէն բան՝ թերխաշ, թեթև, անաւարտ, պակաս է իր վրայ: Փխրուն, նուրբ այդ ծաղիկը կուգայ սակայն հերոսութեան լեռներէն որոնք վերջին պատերազմին բեմ եղան սրտառու հրաշքներու: Ու ասիկա հակառակութիւնն է: Քաղքի պարտիկի մը տրտում իմաստութիւնը ունի: Կը խորանամ դէպի քաղքի իր զգայութիւնները որոնք կը պակսին: Ու կը տրտամ իմ կարգիս. . . : Ձայնին մէջ քաղցր, վառ բան մը, բանաստեղծ մը պիտի ըսեր «մարմառ» մը: Դո՛ւ եմ սակայն նայուածքէն որ բաց է, ազատ, լեռնէն անդին ու շիտակ: Ու յստակ՝ մինչև հոգիին տունը թափանցիկ ընելու բաւող պարզութեամբ: Յուզիչ է իր պզտիկ անձը որ ամէն բանի կը հաղորդէ հիւանդագին ջերմութիւն, տենդ: Կը պատմէ, միամիտ, ուրախ, մօրմէն ուրուն երկվեցեակը անցնող զաւակներէն վերջինն է ինքը: Թիւր երբեմն հօր է, ճակատագրին չափ: Չեմ կրնար բանալ իր սարսափները: Այդ մայրը այդ տղոցմէն քանի՜ հատը հոգին է յանձնէր: . . . Ինչ որ ստոյգ է, այդ մօրը կամքն է նորէն որ կը խօսի ինծի իրեն «մնացած մեկ հաւիկէն» հոս: Դասարան ներկայութեամբը, երբ ինքը իր եօթնասուն տարիները առած հիւզակի մը խորը . . . կը սպասէ: Այդ սրբազան կինը չէ վարանած սակայն այդ «վերջին շտապիղն» ալ բաժնեւոր իր ծոցէն ու Ս. Յակոբ զրկելու: Անոր ալ մէկ է պատգամը միւս մայրերուն հետ — «զաւակը մարդ ըլլալ», ինչպէս եղած էր պատգամն ալ իմ մօրը:

— Շատոնց թաղեր են հայրը: Կրակ կը թափեն իմ վրայ: Կ'անցնի մէջէն բարակ ալ սարսուռ մը անզգալի այն կիսաժպիտին առջև որ բառերուն ընդմէջէն կ'ուրուանայ սա տղու շրթներուն բայց չ'ըլլար, թերեւ շատ դժուար գտնելուն . . . : Ու թշուառ կախարգութեամբ մը, ինծի կը դառնայ, իրաւ ու ամբողջ, ձմրան այն առտուն, ուր չորս մարդերու շալակը ելաւ իմ հայրը, մօրս արցունքին ու իմ ժպիտին մէջէն ու ալ տուն չեկաւ: Կը հասկնաք արցունքը

ու կը փնտռէք ժպիտին գինը որ ափ մը չամիչ էր, դուռած գրպանիս, ինծի տարեկից աղջկան ձեռքէն, որուն հայրը, մեծ ֆապրիֆարոս, դեռ չէ ջնջուած իմ հոգիէն երբ կը ջանայ աղջիկը առնել սա տեսարանէն: . . . Ինչ անորակելի բան է մարդերուն կեանքը: . . . Ու կը շինեմ, իմ տարիներուս կտաւովը սա տղուն այդ մահէն վերջ տանի մօտ տարիները, մօրկանը արցունքին, տառապանքին ընդմէջէն: Ո՞ր հրաշքը եթէ ոչ ան որ մեր բոլորինն է, միջամտած ըլլալու է որպէսզի քովքովի բերունն սա ոսկորները, ճնճուղի կտուցով ճարուած խաւներուն նման: Որպէսզի մագաղաթի փայլ հագնի մեր երեսին սա մօրթը որ վարդի պատեան մըն է ուրիշներու երեսին: Եկեր է «մարդ ըլլալ»:

Պէ՛տք կայ երկարելու սա կախարդ ժպուէնը իրարմէ ուժով զգայութիւններու: Դիտեցէք որ ամէն ուսանող, բերուած ըսփիւռքին ծագերէն, այս տեսակ պատկերներու խորհրդաւոր փունջ մըն է իմ նայուածքիս, որ երբ կը տարտղնէ զանոնք իմ հոգիի դաշտին, ինծի կը բերէ միշտ մէկ մասը իմ թշուառութեան, երբեմն համայնանկարը իմ ժողովուրդին:

Ս. Յակոբայ վարժարանին համար Սուրիան է առաւելագէս որ կը հայթայթէ սա տարօրինակ հունձքը:

* * *

Բայց ձեզի անձանթ է պատկերին միւս երեսը:

Մագաղաթ այս մօրթերը, ազագունն սա ոսկորները, սա բիրտ լեռնականութիւնը ու փխրուն, քաղքենի սա դալկութիւնը, «ճընճուղ» սրունքները, և թուզունի մը վայել կուրծքերը պիտի դարմանեն իրենք զիրենք, անակնկալ արագութեամբ ու միանգամ ընդ միշտ: Համազգեստը պիտի վտարէ այլանդակ, անո՛ճ հագուստը, շաթուան մը մէջ հալածելով այդ տղոց կոնակէն փողոցը, զրկանքը, չունեւորին կնիքը, այնքան յստակ՝ մեր գլխարկէն մինչև կոշիկները: Շարժումներուն խօթութիւնը, խակութիւնը պիտի սրբազրկեն իրենք զիրենք, ներքին կշռոյթի մը սլաքին ներքև որ ձայնն է ըսես Ս. Յակոբայ դարաւոր պատմութեան, աւանդութեան, խորհուրդին: Մնունդը պիտի գունաւորէ այդ մօրթերուն կոնձած չորու-

թիւնը: Մարգանքը, խաղը պիտի միջամտեն, ոսկորներուն ճարձկնէ համար զաշնութիւնը իրենց տարիքին: Ան վարժարանէն իրենց չտալուած խնամքը, որ պիտի դանէ իրենց ամէնէն փոքր խել կարօտները ուսանողի հոգիին: պիտի միտնայ այդ ամէնուն, ստեղծելու համար չափէ, գեղեցիկ պատկերը ժառանգաւորին, հարստութեան մը պէս տպաւորիչ, արշաւանքու, թափօրներու առեն: Երեսմէ:

— Միշտ միւս երեսը պատկերին:

Դառնադոյն փորձառութեամբ մը զխտեմ որ նորեկներուն ուղեղը աւելի թշուառ է քան իրենց մարմինը: Կաշիւակներ, որ քան որ կ'ուզէք, աւելորդ պիտեմքով մը վկայելու համար մեր «ուսումին» անպընդային անկումէն: Երբեմն մեծ մեծ դպրոցներ՝ իրենց շրջաններուն, օտար մշակութիւններու վառարաններ, այնքան տխրալէն անմարդկային, սա որքերուն ստամոքսին բռնադրուած, իրենց աղքատութիւնը գնող, յանուն քրիստոնէութեան: Բացք գրեթէ միշտ, հակառակ այդ վիճարկեանց, այդ տղաքը անկարող են իրենց ներկայացուած էջ մը թուղթին գնելու տող մը բան, իրենց սեպհական, որմէ չամէնայինք, իրենց հաշտոյն մենք, մեծերս: Ինչ ահաւոր բան է որ տասներկինգը անցած տղաք, նախակրթութեան ալ փաստը ծոցերնուն, ոչ զգան, ոչ ալ մնան, անուազն իրենց տարիքին խոնարհագոյն ապրումներուն հաւատարիմ մընալով:

Տարիներ գլորին պիտի մինչև որ անոնց միակտուր ուղեղին վրայ պեղուին ախօսները, ուրանայ ցանցը մտածումին: Ան անոնց միտերուն խորը քնացող պարանները — ջիւղերը — թրթռալ սորվին: Ան անոնց անտաշ, կորդ անձը յարգարուի սրբազան անդաստան, ցեղին գիտակցութեան սերմերը ընդունելու, ու բեղմնաւորելու մեծ խորհուրդը որով գօտեպինդ ժողովուրդները կը քալեն իրենց ճամբան: Տարիներ, յուսահատ կսկիծի, ամուլ աշխատանքի, փառնումի — գէթ այդպէս կը տպաւորեն անոնք — մինչև որ անակնկալ օր մը ծլի պատգամը, առաջին ծաղիկը մարդ ըլլալու պատուէրին:

Ան այս հրաշքը գինն է խումբ մը մարդոց ամենօրեայ, ամենժամեայ անձանձիր եռանդին, սրամաշուքին, — իրենց վար-

դապետներուն: Տարուէ տարի այդ տղաքը պիտի թօթափեն տրտում բեկորները իրենց բերածներուն: Կիտէք թէ մարմինը որքան արագ կը զիմաւորէ այս պարտքը: Անոնց ուղեղը պիտի հասուննայ: Անոնք պիտի ճանչնան իրենց Եկեղեցին, զրականութիւնը, պատմութիւնը, արուեստը, արժէքները, ժողովուրդը ու պիտի գործին ասոր ամբառ թշուառութեան պատկերէն: Անոնք պիտի յուզուին յուզումները իրենց մեծերուն: Պիտի այցուին մեծ անուններուն խոռվքէն: Պիտի երազեն ինչպէս ըրեր էին իրենց մեծ հայրապետները: Պիտի առնեն անգիր խօսքը իրենց պապերուն, որոնք կը խօսին երուսաղէմի մեծ սրբաւայրերուն մէջ, ամէն քարի, ամէն պատկերի մէջէն: Պիտի ըլլան խելամուտ այն իմաստութեան որ իրենց ցեղին յատկանիչն էր տակաւին դարեր տաջ: Պիտի մոռնան իրենց հիւղակներուն ցանկափակ, պզտիկ թշուառութիւնները համապարփակ աղէտին զիմաց որ իրբե կեանք դրուած է իրենց ալիւս այնքան սիրած ժողովուրդին առջև:

Անկիւնոս, անհամաշխարհային գլուխներ պղծտիկ վառարաններ են, տարիներ վերջը:

Ան երբ գայ օրը ուր պիտի կատարուի մեծ զիմումը իրենց սիրտին, իրենց անձին գոհովը իրենց ժողովուրդին թշուառութիւնը կարելի չափով ամօքելու, քիչեր պիտի ըլլան որոնք վարանէին սրտագին երկարելու իրենց պարանոցը սրբազան լուծին, ուրախին:

* * *

Ան տեսայ ձեզ:

Այլակերպ, «պայծառակերպ», պիտի ըսէիք դուք: Պարպուած էին ձեզմէ տրտումութիւնները զոր հիւղերը, զրկանքը, անթոթութիւնն ու անգթութիւնը մարդոց հիւսեր էին ձեր մտադող հոգիներուն: Տեղը այդ բոլորին՝ խոր, ուրիշ տրտմութիւն որ իմաստինն է, երազինը երբ կը զիջանին անոնք բնակիլ մարդոց միտին մէջ: Լուրջ էիք ու իրաւ: Պարպուած էիք ձեր վարանքներէն, վախերէն երբ, անցած կիրակի, Ս. Զակորայ բեմէն, ուրարով ողկուեցուած, կը դառնայիք մեղի — ձեր մեռած կամ ողջ հայրերը, մայրերը, քոյրերն ու եղբայրները փոխանորդող — ու կ'ընէիք ձեռամբարձ հրաժարումը սա աշխարհին այն շատ, շատ բաներէն որոնք չեն ըսուիր: Կային որ կու-

լային, ձեր մատաղութիւնը մեղքընալով: Կային որ երանի կուտային ձեր սեով պատանուած պատանութեան: Մարդիկ իրենց գիտցածը պիտի տեսնեն միշտ: Քիչերու համար սակայն դուք ողջ քանդակներն էիք այն քանի մը հզօր յուզումներուն, երազներուն որոնք քիչ անգամ մարմին կը դառնան, բայց որոնք լման կեանքը կ'արժեն:

Այդ ատեն է որ իմ ներսը տեղի ունեցաւ պղտիկ տագնապ մը, ուրիշներ պիտի կրնային ճշդեւ՝ տոսմ մը: Անհասանելի են մտքին ճամբաները: Քակեցի ձեզ ձեր հանգոյցէն: Դրի ձեր գլուխներուն, աճապարատ՝ ո՛վ գիտէ ինչու, ձեր կէս դարը: Ինծի չուզար թէ ձեզի կը բաշխէի, թերեւ չտեսնուէր կողմէ,

ա) — Կանանչ, առոյգ, սրտոտ, բոլորակերպ երիտասարդութիւն, այն աստուածային, անփոխարինելի տասը տարին ուր մեր իմացականութիւնը կը յանդգնի — ի՞նչ քան անկարելի է անոր որուն տարիքը վար է երեսունէն — նուաճել երկինքն ու երկիրը, իմաստին և զգացումին անհունները, կարօտալի աշխամբժ բազուկներով, հասկընալ ու խորանալ, ու դուրս երբ կ'ելլէ այդ խաչակրութենէն ճակտին քանի մը թիւ ձեր մակով, գիտէ թէ ինչ էր ըրածը: Մտքի մեծերուն ընտանի այս մարզանքէն խօսեր էի ձեզի, քանի քանի անգամներ: Ու միամիտ է ամէն սորվեցնող: Վստահ էի, այդ կիրակի առտուն, թէ դուք, այդ երիտասարդութիւնը պիտի գործածէիք շինելու, միակտուր ու պայծառ, ձեր միտքը ու ձեր հոգին:

բ) — Զեր չափահասութեան սանկ քսան մը տարիները որոնց մէջ ձեր իսկ միջոցներով կերտած ձեր միտքը, խնայած ձեր մարմնեղէն ուժերը դուք պիտի տրամադրէիք ձեզմէ դուրս հազարաւոր կարիքներու յանձանձուլին: Պիտի խօսէիք ձեր Աստուծոյն պատգամները հետզհետէ ամբարիշտ, հետեղհետէ նւթացած մարդոց որդիներուն որոնք մետաղն ու վայելքը ունին քաղաքակրթութեան չափանիշ: Պիտի ծաղրուէիք, ուրացուէիք: Բայց պիտի մնայիք յամառ, աննահանջ՝ ձեր սիրտը, կորովը, խելքը, ձեզ լեցնող յոյսին կրակը աղբերացնել հոգիներուն խորը բոլոր անոնց որոնք պարպուած էին այդ բոլորէն, իրարմէ անողոք հարուածներու ուրականին տակ: Պիտի մոռնայիք ձեր մէջ մարդը, ըսել կ'ուզեմ՝ ա-

սոր տարրական իսկ պահանջները, վտանգի ձեզմէ իր օրինակը սպասող ձեր ժողովուրդը պէտքեր ունէր, միշտ աւելի մեծ, միշտ աւելի ստիպողական: Ինքզինք բաշխելու երատիկա, ձեզիպէսներուն համար նուիրական պաշտամունք: Ժողովուրդին մէջ ու հետո՝ Այսինքն անհուն ցաւերու կրկէսին վերայ: Այսինքն՝ ամէն օր խորտակուող կեանքերու սնարքին: Զտեսայ փառքը, զրամը, աշխարհիկ համբաւը, որոնք արդէն ուրիշ պողոտաներու յանգման կէտերը կ'ըլլան ընդհանրապէս: Դուք պիտի շարունակէիք մեր եկեղեցւոյ հայրերուն աւանդութիւնը: Ինծի թուեցաւ սակայն թէ այդ ամէնը ընելու ատեն, հետ, տարուած ալ էիք ուրիշ սպասով: Ատիկա՝ հետու չը պահէին էր ձեր պարտքերուն չըջանակէն հոգը, պաշտամունքը մեր մշակոյթին — լեզուին, գիրին, ազգութեան պահպանման: Ամենօրեայ ձեր աշխատանքէն չէիք մոռցած միտքին ալ բաժինը:

գ) — Ալեւոյք մը, որ չի թարգմաներ սակայն մտածումս հարազատօրէն: Զեզի բաշխած այս վերջին քառորդ դարը շրջանն էր զգաստ, ամուր, վերջնական աշխատանքին, պտղաբերձ ձեր աշունը, ուր երեցաք դուք իմ աչքերուն, ալեհեր բայց առոյգ, ձեր վաստակին գոհունակութիւնը մատենադարաններու նման դնելով ձեր ու աշխարհին չարիքներուն մէջտեղ:

դ) — Շահաւ ելիք պայքար:

Այսպէս տեսայ ձեզ:

Դուք չգիտցաք հարկաւ թէ այս կախարդական թափօրումի ընթացքին, ևս անգամ մըն ալ իմ մէջէն անցք էի տուեր այն ամէն իդէներուն, յոյգերուն, խռովքներուն որոնք կազմեցին իմ ալ ճամբան: Նայեր էի, տրտում, արտասուեահար՝ այն ամէն անուշութիւններուն որոնք ձեր տարիքին իսկ ոգեւորեցին զիս, բայց մատնուած, ուրացուած ինձմէ, հեռացան անվերադարձ, ինծի ձգելով սգաւոր յիշատակը անվճար մնացած շնորհներուն, անաւարտ պարտքերուն: Դո՛ւք, աւելի բախտաւոր, քան իմ սերունդը: . . . Ուզեցի, այդ պահուն որ ըլլայիք ատիկա: Որով, և, աւելի ընդունակ իրազօրծելու հզօր այն ցանկութիւնները որոնց փշրանքները դեռ կը պտտին, կը թրթռան իմ շուրջը:

Անցած կիրակի, Սուրբ Յակոբայ բե-

մէն, զուք ինծի տուիք այս խոսովքները:
Եւ աւելին:

* * *

Վասնզի տեսայ, . . .

Տեսայ որ կուգայիք:

Դասարանին տեղ մահուան դարձ մըն էր ձեր ոտքերուն տակ: Գիրքերը՝ քարերը մեռելներուն: Աշնան նոյն բարակ արևը:

Բայց ձեր անկիւնոտ գլուխները սղոդ-ուած էին ճերմակին փառքովը որ կը պըսակէր ձեզ, օծուն յոգնութեան մը մէջ ձեր նայուածքը աղատագրելով: Քիչիկ մը կոր էին ձեր հասակները, ամէն օր կրուած քեռներու յայտարար: Աչքերու տեղ ապակիներ կը վառէին ձեր մօայլ ճակատներուն շուրթին: Ձեր անձը շփել խոսքիւն իրազորուած երգի. ու ձեր ուսերուն ձեր կէս դա՛րը, աննահանջ սպասի: Շաբաթսի մը պէս, վկայ՝ ձեր զրկանքներուն, վնասակին, արիւթեան:

Դտաք, քիչիկ մը զօռար, քարը զօր կը թուէիք փնտռել: Խեղճ կտորը մարմարին: Ուրիշ կուրցեր էին զիծերը, թուր՝ գիրերը, սրբուր՝ խաչը, մեռեր՝ անունը:

Կեցաք, մտակորոյս: Ձէիք հաւատար սա լքումին: Հոն էի սակայն:

Շանչցայ ձեզ:

Ձեր անբարբառ շրթները կը թրթռային, մինչ ձեր ուղեղներէն կը թաւալէին մտածումներ, պատկերներ զօրս ես կը կարգայի բաց զրբէ մը ինչպէս:

Ու այսպէս կը թուէին ըսել անոնք,

. . . — «Եկեր ենք քեզի: Գիտենք որ հաշիւը չունիս ուղեղու մեզի բաշխած տարիներուդ: Ու գիտենք որ անբաւական է քեզի, տաղնապղ մեղմելու, զոհունակութիւնը որով ըրեր ենք մեր պարտքերը: Մեզի կ'ըսէիր, կէս դար առաջ, մեր սեղաններուն վրայ, թէ մարդ մը ըլլալու առաքինութիւնը չ'արժեր աւելի քան հայր մը ըլլալը: Թէ մարդը ան էր որ ինքզինքը կ'իրագործէր: Կը հաւատայիր մարդուն ներսը թաղուած ուժին անհունութեան ու կը պահանջէիր որ անհուններ ըլլայինք: Մի մեղադրեր մեզ որ ըլլանք պարտուած, ինչպէս չ'մեղադրեցինք քեզ երբ կ'ըսէիր քու պարտութիւնդ մեզի: Ըրինք, ինչ որ կըրցանք, ինչ որ մեր ուժերը արտօնեցին մեզի: Իւրաքանչիւրս ունի արցունքներ, ինչ

կած իր սիրտին խորը, բարի, պարզ աչքերէն որոնց թարթիչներէն քաղեցինք մենք այդ գոհարները: Գիտենք որ կը սիրէիր ուրիշներուն ցաւը, զայն զիմաւորելը: Ոտեցանք միմեան հոգիներուն խորը երբեմն յոյսին կայծակը վառելով, երբեմն անգունդի եզրին հասնելով անոնց: . . . Ձենք կրնար մէկիկ մէկիկ պատմել քեզ մեր ըրածները: Բայց կը համարձակինք քեզի յայտնել բաներ որոնց իրագործումին կարօտովը փակեցիր աչքերդ: Հիմա, մենք քեզմէ աւելի գիտենք մեր պատմութիւնը ոչ իրր թիւ ու անուն, այլ իրր ներքին այն իրականութիւնը որուն մտատեսութիւնը ունէիր: Գիտեմք մեր եկեղեցին, ոչ իրր գաւաղանագիրք մը, այլ իրր կրկէսը իրարմէ հզօր առաքինութեանց որոնցմով դատեպիկդ մեր հայրապետները անցեր են արեան և կրակին մէջէն . . . : Շէնք է, իր փոքր բայց սեպհական գետինին վրայ, մեր մտածումին ու զգացումին պատմութիւնը, մեր Մատենադրութիւնը, գրեթէ այն ոճով, ճարտարապետութեամբ որուն յղացքը կը ջանայիր արմատացնել մեր մատաղ մտքերուն խորը: Հիմա, աւելի մօտ ենք այն համայնապատկերին որուն ուրուածներ թելագրեցիր մեզի: Քու ժողովուրդիդ խորհուրդը կը հասկնանք, քեզմէ աւելի պայծառ քան այն օրերուն երբ կը տառապէիր մեր մէջ սեւեռել անոր հանգոյցը: Կը լսէինք քեզի, առանց տեսնելու: Իր ուժերէն վեր աշխատող մարդու միամիտ եռանդը երբ կ'ստեղծէր այս մութ գեղեցկութիւններով, կը ապաւորուէինք . . . : Եկեր ենք, մեր կարգին, մեր պարտութիւնը գնելու քուկինիդ մօտիկ: Ըրինք, մեր մշակոյթին համար ինչ որ ուղեցիր մեզմէ, ուրարին հանգոյցէն երբ կը քակէիր մեր պատանութեան որաները: Ճերմակ մագերուդ կը բերենք միացնել մեր ալ ճերմակ մագերուդ: Կը լսե՞ս»:

* * *

Սարկաւազները դարձած են խորան:

Յոգնութիւն՝ իմ սրտին:

Դուրս կ'ելլեմ ժամէն: Ու իմ քայլերը զիս կը տանին խորհուրդու, քարէ զրբերով յորինուած դասարանին ուղղութեամբ: Թեթեւ:

— Թերեւս:

Յ. ՕՇԱԿԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԴՐԱՊՈՏ ՄԸ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԴՐԱՊՈՏ ՄԸ

(Շարունակութիւն ՅՈՒԼԻՍ—ՕԿՈՍՏՈՍ ԹԻՒՆ, 1940)

6. — Եղեմը՝ Հայաստանի մէջ. — Թէ Ս. Գրոց մեկնաբաններու մեծագոյն մասը Դրախտը տեսնել ուզած է Հայաստանի մէջ, ասիկա շատ հին մեկնաբանութիւն մըն է, ճիշտ է և կ'արժէ դայն պահ մը քննել: Հայ ժողովրդային անգիր բանահիւսութեան և իրմէ ծնած գրաւոր աւանդութեանց և հոսեկ յետոյ պատմութեան մէջ անջնջելի և անկողովպտելի համոզում է որ Ս. Գրոց եղեմական Դրախտին տեղը Հայաստանի մէջ էր և Հայաստանն էր «մարդկային ցեղի առաջին որրանը»: Ո՛չ մէկ հայ պիտի կամենար բաժնուիլ իր այս անխախտ համոզումէն, որուն վրայ աւելնալ պիտի գային նոյնպէս ս. գրական այնքան բացայայտ տուեալները և թէ օտար հին և նոր մատենագիրներու կարծիքները: Արեւելեան կամ բուն Հայաստանի հարուստ հովիտները մինչև այսօր դեռ կը կազմեն աշխարհի ամենէն պտղաբեր և հոյատեսիլ գաւառները: Կարնոյ գըրախտանման գաշտէն սկսեալ մինչև Արաքսի գաշտը հասնող երկիրը, իր բարձրաբերձ լեռներով ու զմայլելի տեսարաններով, իրական ու բնական գեղեցկութիւն մըն է՝ ու Օրտուպատի ովասիօը՝ Հին Ջուղայի ստորոտն ու Արաքսի ձախ ափին վրայ, ըստ հայկական հնագոյն աւանդութեան մը, ցոյց կը տրուի իբր եղեմական դրախտ: Խճճողոց գիրքի մէջ յիշուած չորս գետերը կ'ոռոգեն այս հարուստ գաւառը: Երբայեցի մատենագիր մարգարէներուն և ժողովուրդին համար հանրաձայնութ գետ էր Եփրատ, ու ճիշտ այս նկատումով է որ Ս. Գրոց մէջ անոր քով ու է յաւելուածական ծանօթութեան չենք հանգիստիլ: Անոր ակնադրելը Հայաստանի մէջ է, ունենալով երկու գլխաւոր ու անջատ ակեր, ինչպէս որ Վարդան աշխարհագիր իր ժամանակին գիտէր. «Գետն Եփրատ յեկեղեաց գաւառին է, և մի ակն ի յԱրգրուժ (Կարին) և երկրորդ ակն ի յԱրճէշ, ի սուրբ Ոսկենից ելանէ և անցանէ

ընդ Տարօն և զնայ ընդ Ասորեստան», Ծաղկէոյ կամ Ծաղկաց լեւան կողերէն, ուր ճգնեցան Ս. Ոսկեանք, գաւառն ալ կոչելով Ծաղկոտն: Տիգրիսի ակնադրելուն ալ հետու է Արճէշի ակէն, ժամ մը հեռաւորութեամբ միայն: Ըստ բազմաթիւ ճանապարհորդներու, Ս. Գրոց Փիսոնն ու Գեհնը՝ Փասիսն ու Արափսն են: Փասիս՝ ինչպէս որ Քսենոփոնի իսկ ծանօթ էր, կը բղիթի Արաքսի ստորոտէն, ո՛չ շատ հեռու Եփրատի ու Տիգրիսի ակնադրելներէն, ըստ Calmetի և Rosenmüllerի: Եւրպատի երկիրը, ուրկէ կ'անցնի Փասիս, զոր երբայեցիք Պաւլատ կը կոչէին, մեր Պաղտիք կամ կողքիտ նահանգն է, որ կ'իյնայ նոյն գետի մօտերը*): Իսկ Եւրպատի ոսկիւրն և պատուական քարերուն վայրը Սպերի գաւառն է, Կողքիտի հարուստ հանքերը, որոնց մօտ հասան Արգոնաւորդները, ոսկէգեղմը գըտնելու յոյսով: Ստրաբոն կը պատմէ որ այս երկրին գետերն ու հեղեղները իրենց հետ կը բերէին ոսկի թերթիկներ: Այս ձորով կամ Ծորով գետը՝ որ Փասիսն է, այժմ կը կոչուի Նաե Չորագ կամ ձուլուիս, որու մասին Արիստակէս Լաստիվերացի կ'ըսէ. «Իսկ որ ի Տայսն մօտն, առեալ գերկիրն, և հասեալք մինչև ի գետն մեծ որ կոչի Ծորով, և գնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն Պաղտեաց»: Նոյնը կը յիշէ Նաե Յոհան Մամիկոնեան. «Առեալ զՊարսկս էանց ընդ գետն ձորով, և զնաց ընդ քաղաքն Համամայ՝ որ կոչի Տամբուր. եհար սրով և հրով»: Թէ և Ծորով անունին չենք հանգիստիլ Ս. Գրոց մէջ, բայց գետս հոն կը յիշատակուի ուրիշ անունով, որ է Փիսոն, մէկը Դրախտի չորս գետերէն, վասն զի գետիս հայերէն անունը, իբր արմատ, ունի ծոր, ուղիս իմաստով, որմէ կը յայտնուի որ գետը՝ Ծորիս, կը հոսի ուղիսօրէն, սաստկութեամբ, իր զնացքին վրայ աճելով ու յորդելով, որուն իմաստը Մովսէս ուղեւորով յարմարցնել, գրած է Փիսոն անունը, որ ըստ երբայեցոց կը նշանակէ աճիլ, զեղուլ: Ստրաբոն՝ Հայաստանի գետերու կարգին կը յիշատակէ Փասիսն ու Լիգոսը կամ Գայլ գետը՝ որք կը թափին Պոնտական ծով. «Կողքիս ըստ մեծի մասին իւրոյ առ երկ

*) Գրիգոր Բիլ. Մանդակունի: Պատմութիւն Հին Ուխտի, 1896, Թիֆլիս, էջ 11:

կայ ծովու, ընդ այն ընթացանքի փասիս գետ մեծ թղխեալ ի Հայաստանեաց...: Շատեալու կարգին բաւական պիտի ըլլար յիշել նոյնպէս Պիւնիսոն ալ...: Յայնկոյն քան զայն՝ ազգն Ասմէնոս-քայլոյք (որք կաղտիքներն են) երեսուն հազար քայլիւ, տաւրակայեալ ի հայոց մեծաց...: Իսկ ի յիշերս են...: Գետք (են) Ագամբոսի...: և առաւել ահանաւոր գետ Պոնտոսի՝ Փասիս, ծագի ի Մոսքեանց...: Հարսուէին նոյն Փասիսը կը գնէ ոչ շատ հեռու եփրատի տէրադրութենէն: Պրոպոլիս, նոյնպէս, Փասիս գետը Հայաստանէն ելած կը գրէ, անցնելով Եգեթացոց կամ Կողքիսացոց աշխարհէն: Հին բոլոր մատենագիրներն ալ Փասիսը կողքիս գաւառէն կ'անցունեն, Տրոպոլիսի և Հաղիստանի մօտ: Նոյն մատենագիրներն են զարձեալ որ Փասիսի կողմերը կը գնեն ոսկիի հանքեր: Անկարելի է որ Միջերկրական և Եգէական ծովերէն անարգել մինչև Պոնտոսի ծովը հասնող նաւորդներ անծանօթ ըլլային Հայոց մեծաց Կողքիս գաւառի ոսկիին, ինչպէս անծանօթ չեղան, զոր օրինակ, Արգոնաւորդները*):

Ի՞նչ քանակ ըստ դասական մեր հին մատենագիրներուն, Գեհնը կամ Երասիսն է կամ Արաքսը, որուն ահնադրութիւնը կը զբաւենի եփրատի արեւմտեան ափին մօտ, հոսեւոր Կասպից ծով: Ծննդոց գիրքի խմբագիրը, ըստ Calmetի, Երասիսն դէմ կը գնէ Գեհնը, ըստ եբրայական լեզուի, որ կը նշանակէ յարձակամբ հոսիլ, կամ լծափ ընթացելով վազս առնուլ: Եւ արդարեւ Երասիսի ջուրերը քանի՜ առատանան գարնան ձիւնհալէն, ա՛յնքան գետը կը բարձրանայ ու սաստիկ արագութեամբ կը վազէ դէպի ծով: Եւ որովհետեւ Դրախտին առաջին գետը՝ Փիսոն, և երկրորդ գետը՝ Գեհոն հեռու էին Պաղեստինէն և հեռաւոր Հրեաներուն անձանթ, Մովսէս ջանաց անոնց իւրաքանչիւրը ճանչցունել իրենց առանձնայատուկ նշաններովը, մէկը զնեղով ոսկիի և թանկագին այլ քարերու հանքերով առատ Կողքիս գաւառին մէջ, և միւսն ալ, Գեհնը, ցոյց տալով իբր արագավազ գետ: Բաց աստի Գեհնը կարելի

էր որակել սեպհական ու առաւել երեւիլ նշանով մը, իր «քարավազ» ընթացքովը, երբ գետը այնպիսի բարձրութիւններէ վար կը զահավիժէր, տեղ տեղ կամարակապ ստուժներով՝ որ Հրեայք տեսած չէին երբեք Ասորիքի ու Միջագետքի ընդհանրապէս անապատային շրջանները սոսկող շատ աւելի մեծ գետերու վրայ: Արաքսի անունը արգիլ արարելէն լեզուի մէջ ձեյլաւուց երաւ (ծօշխուն) է, պարսկերէն լեզուով ձուց կամ ձեհուց, որոնք շատ կը յիշեցնեն եբրայերէն ձեհոնը կամ Գեհոնը: Բուշանաց երկիրը, որ Գեհոն գետով սոսկուած է, ափրիկեան եթովպիան չէ բնաւ, այլ ասիական ա՛յն երկիրը՝ որ բնակավայրը եղաւ Բուշի սերունդին: Արքան որ Սուրբ Դրոց տառական բացատրութեամբը եղեմի չորս գետերը միեւնոյն ահնադրութիւնը չունին, ասով մէկտեղ կարելի է հաւանական նկատել որ երկրաբանական զանազան յիշաւորջումներ, փոխած ըլլան հողագրութիւնը ա՛յն տեղերուն՝ ուր Դրախտը կը գտնուէր*): Թէ՛ հին դասական մատենագիրները՝ Պաղեստոս, Պողիբբոս, Ստրաբոն և այլն, և թէ նորագոյն երկրաբաններ, համաձայն են Հայաստանի մէջ գնելու երկրային Դրախտի, եփրատի, Տրոպոլի, Գեհնի կամ Արաքսի գրեթէ միեւնոյն ահնադրութիւնը ունենալին անժխտելի ապացոյց է որ Ծննդոց Եգեթը, զոր Աստուած Արարիոյ անապատին կամ Հրէաստանի արեւելքը տնկեց, աշխարհագրականօրէն Հայաստան կ'իյնայ անոնց արեւելքը:

7. — Եղեմը՝ Պաղեստինի մէջ. — Տալէ յետոյ եղեմական Դրախտի չուրջ հինէն ի վեր յայտնուած բոլոր մեկնարանութիւնները, այժմ տեսնենք թէ Joh. de Groot ի՞նչ փաստեր կը գնէ Ս. Դրոց մեկնարանական գիտութեան առջև, ուղեւորով պահ մը հաստատել թէ Դրախտը կը գտնուէր Պաղեստինի մէջ:

ա. «Այս է գիր արարածոց երկնի եւ երկրի, յաւուր յորում արար Աստուած զերկինս եւ զերկիր, եւ զամենայն բանջար վայրի՝ մինչ չեւ բուսեալ էր, զի չեւ եւս էր տեղացեալ տեառն Աստուծոյ ի վե-

*) Հայր Դուկաս վրդ. Էննիմեան՝ Հնախօսութիւն Աշխարհագրական Հայաստանեայց Աշխարհի, 1843, Վենետիկ, Ա. հար. էջ 142:

*) F. Vigouroux: Dictionnaire de la Bible, Դ. հատոր, էջ 2119-2128:

բայ երկրի. եւ մարդ չէր որ գործէր երկիր...» (Յնունդ՝ Բ. 4 և 5): Ըստ այս հաստատման, անձրեւն է որ պիտի պտղարեւէր. այս դիժը մեղ չ'առաջնորդեր ո՛չ բարեխոնական և ոչ ալ եղիպտական ակնադրութիւն մը, բայց եթէ յայտնապէս պաղեսիներն:

բ. «Բայց աղբեր ելանէր յերկրէ եւ ոռոգանէր երեսս երկրի» (անդ, 6): Ըստ երրորդական բնագրի, աղբիւրը պէտք պիտի ըլլար մեղով, ցօղով կամ ջրառովով թարգմանել, ինչպէս որ Յոբէր գիրքին մէջ (Լ. 9. 27) կը կարդանք. «Թուեալ էն նմա շիբ մանրելի, եւ զեղցին անձրեւով յամպս»: Այս կէտը տեղին է մէկու մը զրջին տակ՝ որ իր աչքերուն առջև ունի Պաղեսիցի չոր ու երաշտ բնաշխարհը, ուր ամառ եղանակին մէջը կամ գոլորշին (vapour) անհրաժեշտ խոնաւութիւնը պիտի ընծայէր երկրին:

գ. «Եւ ստեղծ տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն յոգի կենդանի» (անդ, 7): Հո՛ս ալ յատկանշորէն պաղեսիներն դարձուածք մը կը նշմարուի: Երկար ատենէ ի վեր երբ անձրեւ չէ տեղացած, Պաղեսիցի հողը ծածկուած կ'ըլլայ չոր փոշիով մը:

դ. Քանի մը համար անգին կը կարդանք. «Եւ ա՛ռ տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եղ զնա ի դրախտին փափկութեան, զօրծել զնա եւ պահել» (անդ, 15): Պաղեսիցի, ինչպէս նաև Սուրիացի կամ Եգիպտացի խոհական Ֆելլանը, որուն հետ Ադամ տարակոյս չկայ որ հասարակաց շատ մը գիծեր ունէր, ո՛չ միայն պարտաւոր էր իր արոր հերկել, այլ նաև զայն պիտի պաշտպանէր անասնոց և մարդոց դէմ:

ե. Դրախտի կենդանիներու յիշատակութեան մէջ, վայրի անասնոց, թռչուններու և կենդանեաց կարգին, կը պակսին ջրային կենդանիները. «Եւ ստեղծ եւս տէր Աստուած զամենայն գազանս վայրի եւ զամենայն թռչունս երկնից. եւ ամ զնոսա առ Ադամ՝ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա» (անդ, 19): Ասիկա բացասական նշան մը ըլլալով հանդերձ, կրնայ զրական իմաստ մըն ալ ունե-

ցած ըլլալ: Յայտնի է որ այս տողերը խըմբագրողը Յուդայի երկրին մէկ զաւակն է, երկիր՝ որ ջրային կենդանի բնաւ չունի:

զ. Ծննդոց մէջ (Գ. 7) կը խօսուի բղենի մասին, որ թէև բոլորովին չի պակսիր Բարելոնի մէջ, բայց որ շատ յատկանշական մէկ ծառն է Պաղեսիցի: «... եւ

կարեցին տերեւս բղենու, եւ աւարին իւրեանց ուխածանելիս»: Նոյնը կարելի է ըսել նաև որթատնկիին համար որ Պաղեսիցի վաղածանօթ ծառերէն մին է, և հոնկէ թերեւս այլուր տարածուած և որ կրնայ ըսուիլ թէ մասնանշուած է «ծառովը՝ բարեւոյ և չարի գիտութեան»:

հ. Երբ Եհովա (Ելոհիմ) կը շրջէր Դրախտին մէջ, ատով կ'ուզուի ցոյց տալ ծովէն փչող այն զովացուցիչ հովը՝ որ կէս օրէ յետոյ ժամը երկուքին ատենները փչել կ'սկսէր մինչև արեւուն մարը մոնելը Յուդայի լեռներուն մէջ: «Եւ լուան զձայն զգնալոյ տեսուն Աստուծոյ ի զբրախտի անդ ընդ երեկոս» (անդ, Գ. 8):

ը. «Փուշ և տատակ բուսուցէ քեզ եւ կերիցես զբանջար վայրի» (անդ, 18): Հոս չի՛ խօսուիր առ հասարակ փշենիի կամ ոքոզակի մասին, այլ պաղեսիներն երկու շատ հասարակ տեսակէ ոքոզակի կամ ուղտափուշի մասին՝ որոնք ներկայիս կը կոչուին qous կամ qous (carthamus glaucus կամ syriacus) և dourdar (centaurea pallescens):

բ. Ծննդոց (Բ. 10)ին մէջ կը հանդիպինք դրախտը ոռոգող գետին և անոր չորս գետակիցներու կամ բաժանումներու անուններուն: Այս նկարագրականին մէջ ալ պաղեսիներն գիծ մը կայ՝ որ դիւրաւ կը նշմարուի, հակառակ շուէտացի յայտնի մեկնաբան A. Brock-Utneի միակողմանի, բռնազբօսիկ և ոչ համոզիչ փաստարկութեան՝ ուր սակայն նուազ պիտի չըլլան փաստերը Ծննդոց (Բ. և Գ.) մէջ Պաղեսիցի զուգական կեանքի յատուկ շատ մը գիծերուն: Ըստ de Grootի, տեղական-պաղեստինեան այս ինը գիծերը պարզ գիպուածի մը արդիւնքը չեն բնաւ: Ինչպէս որ նախապէս յիշեցինք, de Groot միշտ այն տեսութիւնը կ'ուզէ պաշտպանել՝ որ իսրայէլեան այս պատմուածքին ետին կը դրոշմէր պաղեստինեան զբախտի հնազոյն

քննարկը մը: Թէ՛ de Groot և թէ՛ շատ մը նորագոյն գիտնականներ, մասնաւորապէս Ռաս Շամբայի կուէ տախտակներու գիւտէն յետոյ, այն համոզման յանգեցան՝ որ Մովսէսի ապրած ժամանակէն շատ առաջ գոյութիւն ունէր քանանական գրականութիւն մը: Կրնայ ըլլալ որ կ'ըսէ de Groot — թէև շատ տարտամ ենթադրութիւն մը եղած ըլլայ տարեկա — որ Դրախտի յատուկ այս հնագոյն պատմութեամբը, ա'յն որ իրր մեծ անձանօթ մը ծածկուած է Ծննդոց քննարկին ետին, անձանօթ եղած չըլլար երբեք Ուկարիդի (այժմու Ռաս Շամբայի): Ու մ'չ միայն այսքան, այլ և de Groot կը կարծէ որ Ս. Գրոց մովսիսական ամբողջ քննարկին ետև կարճատ աւելի հին քննարկ մը, հակառակ P. Humbertի այն ենթադրութեան թէ Ծննդոց Դրախտի յատուկ պատմութեամբն է որ Մովսէսի կողմէ ի նորոյ խմբագրութեամբ է «Դրախտի Իցարաբանութեան» մը հին քննարկին վրայէն: Այսպէս Ծննդոց Բ. և Գ. գլուխներուն մէջ այնքան շատ յիշատակութեամբ ԾՆ և յԵ յատկանշական բառերը Ուկարիդի քննարկներուն մէջ հազուադէպ չեն, Ծննդոց մէջ գործածուած միւսնոյն իմաստով: Ասմ կը թուի որ գործածուած է կրկին իմաստով, թէ՛ իրր յատուկ անուն եւ թէ՛ «մարդկութիւն» իմաստով: Ըստ Virolleaudի, Ռաս Շամբայի քննարկներուն մէջ անձնաւորութիւն մը կ'երևայ՝ որուն անունը թէև Ասմ կը գրուէր, բայց որ անկասկած Ադամ կը հնչուէր: Այս Ադամը կը բնակէր այն գաւառներուն մէջ՝ «ուր արևը կը ծագէր»: Ասիկա արդէն ինքնին բաւական է Ծննդոց գիրքը յիշեցնելու: Եւ արդարև Անադ չաստուածուհիի պատմութեամբին մէջ կը հանդիպինք Ասմ բառին, «մարդկութիւն» իմաստով, ա'յն իմաստով՝ որ յիշատակուած է Ծննդոց մէջ: Բէրէզի աւանդալէպին մէջ էլ կը կոչուի ապ ասմ, «մարդկութեան հայր» կամ «մարդոց խումբի մը հայր» իմաստով, իսկ սն պտղաբերութեան իմաստով: Դա՛րձեալ ըստ Virolleaudի՝ սնմ կը նշանակէ դաշտագետին, իսկ սն սնմ՝ «դաշտագետներուն գեղեցկագոյնը», որ պիտի նշանակէր «դրախտային վայր» մը և որ կը գտնուէր Մասպար էլ, որ է «Պաղեստինէն քիչ մը հարաւ»: Այս սն սնմ բացատրութիւնը գիւրաւ կը համապատասխանէ «գեղեցիկ պարտէզ»ի մը կամ եղեմի,

ինչպէս որ կը կարդանք եզեկիկի մէջ՝ «ի գրգանս Դրախտի Աստուծոյ եղեր, և զամենայն ականս պատուականս ի քեզ կապեցեր» (ԻԸ. 13): Եւ դա՛րձեալ «... չուցին ի Հաւիայ, և բանակեցան յելիմ, չուցին յելիմայ, և բանակեցան յՄափիդին...» (ԹիւԼ՝ ԼԳ. 13) կը մասնանշէ որ Քէրէզի աւանդալէպին էլն է Ս. Գրոց այս ելիմը, Սին անապատին և Սինայի մըջ, Ալուշ՝ անմարդաբնակ գաւառը: Ռաս Շամբայի Փիւնիկեան բանաստեղծութիւններէն յայտնի է որ փիւնիկեցիք շատ մօտէն ծանօթ էին այն երկրին՝ որ կը գտնուէր Կարմիր ծովուն և Միջերկրականի միջև, որուն վրայ է որ գրած են իրենց հնագոյն աւանդալէպերը, երկիր՝ որ առաջին բնակավայրը նկատուած է Քանանացիներուն, որոնք յետագային պիտի տորածուէին Տիւրոսի, Սիդոնի, Պիպլոսի, և Նոյնիսի, չուրջ 2000 ին (Ք. ա.), մինչև Ռաս Շամբա (Ուկարիդ): Տեսանք վերագոյն որ Հին Կտակարանի մէջ եզեմ (Ետինու) ունի հետեւեալ իմաստները.

1. — Դաւս, պարսեգ՝ ինչպէս՝ «Եւ տնկեաց Աստուած զԴրախտ յեզեմ ընդ արևելս» (Ծննդոց՝ Բ. 8):

2. — Հանդիմ, երգանկութիւն՝ ինչպէս՝ «... բայց ոյք համբերեն Տեառն՝ նոքա ժառանգեցեն զերկիր» (Սաղմոս՝ ԼԶ. 9):

3. — Իրր յատուկ անուն՝ ինչպէս՝ «ի գրգանս Դրախտի Աստուծոյ եղեր» (եզեկիկի՝ ԻԸ. 13), «Եւ գետ ելանէր յեզեմայ ոռոգանել զԴրախտ» (Ծննդոց՝ Բ. 10): «... Եւ ել Կային յերեսաց Աստուծոյ, և բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման եղիմայ» (ա'նդ, Գ. 16): «... և եզ զնա ի Դրախտի փափկութեան» (ա'նդ, Բ. 15): «Եւ եհան արձակեաց զնա (Ադամ) տէր Աստուած ի Դրախտ անտի փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ...» (ա'նդ, Գ. 23): Յայտնի է որ Դրախտ վերջին երեք համարներուն մէջ գործածուած է թէ՛ իրր յատուկ անուն, թէ՛ իրր պարսեգ, և թէ՛ կաբելի է ըսել (վերջնոյն համար) իրր հաճոյք, փափկութիւն:

Հալեպ

ԱՐՏԱԽԱԶԳ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Վերջը յաջորդիւ)

ԼԵՋՈՒՍԳԻԻՏԱԿԱՆ

ԳՐԱՊԱՅՔԱՐ (*)

ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Ամէն ազգի մէջ նկատուած մի կրկնութիւն է որ երբ մի հին լեզու այլևս գործածուած չի ընկնում է և նոր լեզուն նրա տեղն է անցնում, հնասէր գիտնական մարդիկ, որ ճանաչում են հին լեզուի յարգն ու ճաշակը, չեն կարողանում մի անգամից բաժանուիլ նրանից և ամէն ջանք գործ են դնում հինը վերանորոգելու: Բացում է այստեղ էլ հնի և նորի, պահպանողականութեան եւ ազատամտութեան կռիւը: Հնէրը սկզբում ուժեղ գիմարութիւն են ցոյց տալիս, կարողանում են մի ժամանակ հին լեզուի յիշատակը վառ պահել, բայց իրենց յաջողութիւնը վաղանցուկ է: Նրանք օրից օր տեղի տալով՝ վերջապէս յաղթում են նորերից և նոր լեզուն գերաւում է հնի բոլոր ասպարէզները: Այս ընդհանուր ճակատագրական օրէնքը տեղի պիտի ունենար նաեւ մեր մէջ:

Հին և նոր լեզուի, այսինքն գրաբարի և աշխարհաբարի վէճը կոչւում է մեր մէջ գրապայքար:

Սկզբում, երբ աշխարհաբար գրուածքները շատ սակաւաթիւ էին, գրապայքար չկար. ամէնքն էլ արհամարհում էին աշխարհաբարը, իբրեւ ռամկին միայն վայել լեզու: Յետոյ երբ աշխարհաբար գրականութիւնը մեծացաւ ու զարգացաւ, այդ երկուսի միջեւ վէճի դուռը լայն բացուեց: Յարձակողականը աշխարհաբարեանների կողմից էր, մինչդեռ գրաբարեանները աւելի պաշտպանողական կռիւ էին մղում: Գրապայքարը սկսում է 50-ական թուերին, 1818-ի ֆրանսիական յեղափոխութեան զաղափարներով սնուած արեւմտահայ ազատականների կողմից: Կռիւը միաժամանակ մղւում է թէ՛ Տաճկահայոց և թէ՛ Ռուսահայոց մէջ. և թէև վերջին-

ները շուտով լուծում են հարցը յօգուտ աշխարհաբարի, բայց Տաճկահայոց մէջ կռիւը շարունակւում է մինչեւ 90-ական թուականները: Անթիւ են այս առթիւ լոյս տեսած յօդուածները, բանակոխները, վիճաբանութիւնները: Գրաբարեանները հետեւալ պակասութիւններն էին գտնում աշխարհաբարի մէջ.

1. Աշխարհաբարը բազմաթիւ բարբառներ ունի և յայտնի չէ թէ ում պէտք է տալ իրաւունքը:

2. Նա լցուած է ռամկի բառերով ու ձևերով:

3. Շատ բազմաթիւ օտար բառեր ու ոճեր ունի:

4. Լի է սխալներով:

5. Աշխարհաբարը անկանոն է, այսինքն չունի քերականական ձևերի միօրինակութիւն:

6. Աշխարհաբարը մութ լեզու է. չունի գրաբարի պարզութիւնը:

7. Բարդ բառերի կազմութեան մէջ ճաշակ չի գրած:

8. Աշխարհաբարը սովորել աւելի դժւար է քան թէ գրաբարը:

Թողնենք յիշել այն անմիտ պատճառաբանութիւնը թէ գրաբարը այն լեզուն է «գոր Աստուած Ագամի սովորեցուց, Ագամ Նոյի և Նոյ Հայկի. ուրիշ ազգերն կը նախանձին մեզ, որ մի այսպիսի լեզու ժառանգած եմք, և մեք ջնջեմք զայն: Թէ մեր մէջ գտուի ոք որ գրաբարին դէմ խօսի, Հայաստանի Լուսաւորչական Սուրբ Եկեղեցիի թշնամին է նա, զի գրաբարն է մեր կրօնական լեզու» (Չերազ, Ազգային Դաստիարակութիւն, էջ 116):

Գրաբարի դէմ եւ աշխարհաբարին ի պաշտպանութիւն գրուած գրքերի մէջ ամենից աւելի նշանաւոր են՝ Այտնեանի Գըննական Քերականութիւնը (Վիեննա 1866), եւ Չերազ՝ Ազգային Դաստիարակութիւն (վարժապետական ժողովին մէջ խօսուած ճառեր), Պոլիս 1876: Առաջինը (յատկապէս իր ընդարձակ ներածութեան մէջ) զուտ գիտական մեթոտով ապացուցանում է, որ լեզուների մէջ սուրբ և անսուրբ չկայ, բոլորն էլ յարատեւ փոփոխութեան, բարեշրջութեան ընթացքի մէջ են և պատմական անհրաժեշտութիւն է որ նորերը փոխանակեն հնէրը: Երկրորդը շատ աւելի

(*) Վերցուած՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ի.Ե. Գյուլիս):

վիճական է և աշխատում է ապացուցանել թէ՛

1. Աշխարհաբարը աւելի կարճ լեզու է քան զրաբարը. ինչ. չողորմեցայ — ոչ ողորմեցայ:

2. Աշխարհաբարը ժողովրդական լեզու է, մինչ զրաբարը ազնուապետական է. այսպէս ժողովրդական են վախ, հով, վիղ, մինչդեռ ազնուապետական են արանց հոմանիշները՝ երկիւղ, հողմ, պարանոց:

3. Գրաբարը ունի բազմաթիւ աւելորդ բառեր, որոնց աշխարհաբարը ջնջել է. այսպէս զրաբարն ունի ո՛ւր, յո՞, յո՞վ, իսկ աշխարհաբարը միայն ո՛ւր:

4. Գրաբարի ձեւերը երկգիմի են, աշխարհաբարը եկու զանազանելու և խրաքանչիւրի ձեւը որոշելու. այսպէս զրաբար զարդու թէ՛ սեռական է և թէ՛ գործիական. աշխարհաբարը որոշեց սեռական զարդի և գործիական զարդով:

Ինչ վերաբերում է այն անմիտ պատճառաւորութեան թէ զրաբարը կրօնական կամ սուրբ լեզու է, ահա իր խօսքերը՝

«Ոչ մի լեզու սուրբ է, ոչ մի լեզու անսուրբ: Մուհամմէտ կ'ասէր թէ արաբերէն կը խօսուի զրախտին մէջ. դուք ալ որպէս կ'երեւի ինձ, շատ հեռի չէք կարծել թէ զրաբար կը խօսուի անդ: Այսպիսի ծայրահեղութիւններ պատիւ չեն բեր: Աստուած բարի սիրտ կը պահանջէ, և ոչ կանոնաւոր լեզու. առաքինութիւն, և ոչ քերականութիւն: Ի՞նչ, միթէ կարելի չէ աշխարհաբարով օրհնել. ի՞նչ, միթէ կարելի չէ՞ զրաբարով հայհոյել»: (Ձեռագ, Աղգային Դաստիարակութիւն էջ 71):

Այս համառօտ ականարկով մենք բաւականանում ենք և հրաժարւում ենք տալ զրապայքարի մանրամասն պատմութիւնը: Ասենք միայն այն, թէ զրաբարեանների առարկութիւնները շատերը իրաւացի էին, բայց վերաբերում էին աշխարհաբարի հին շրջանին: Աւելի յետոյ այս թերութիւնները ընդհանրապէս վերացան. այսպէս վերացուեց բարբառների բազմազանութեան հարցը՝ արեւմտեան զրականի համար հիմք ընդունելով Պոլսի բարբառը, իսկ արեւելեան զրականի համար Երեւանի բարբառը: Վերացան ումիկ (այն է աղաւաղեալ), ինչպէս և օտար բառերը, սրոնք փոխարինուեցան զրաբար ձեւերով կամ նորակերտ

բառերով: Պոլսի բարբառը հիմք ընդունելով՝ հաստատուեց քերականական ձեւերի միօրինակութիւն, որով անկանոն վերագրւե՛ր՝ որ շատ յաճախ չպրտւում էր աշխարհաբարի ձակաւորին, նոյնպէս վերացուեց: Մի ժամանակ Պոլսահայ գրողները հետեւում էին տաճկերէն պաշտօնական լեզուի պատկառ ոճին: Տաճկական այս ոճի մէջ սիրելի և գնահատելի է գերբայական ձեւերի խճողումը (ընելը, ընելէն, ընելով, ընելնին, ընելովին, ընելու պատճառով ևն.) և ընդհակառակը զիմաւոր բայերը շատ քիչ են գործածւում: Մեր գրողներն էլ հետեւելով այդ ոճին իրօք որ շատ մոտ իւր անհասկանալի էին դարձնում հայերէնը: Ահա մի փոքրիկ նմուշ այս անիմանալի ոճի.

«Ուստի տարապայման ու ձեռք եղած միջոցներով լեւալինն անհնար եղած իղձերը մէկգի առնելով՝ ժրութիւն ու բարենախանձ գրգռելու և մարդուս կարողութիւններ զարգացնելու իղձերը արհամարհելը՝ իմացական ու նիւթական թմրութիւնը՝ մարդուս օրինաւոր վիճակ մը սեպել է» (Զօրայեան, Դաղաքական տնտեսութեան վրայ տեղեկութիւններ, Պոլիս 1849, էջ 267):

Ուզում է ասել.

Ուստի եթէ մէկը մի կողմ դնէ այն իղձերը, որոնք տարապայման են և առձեռն միջոցներով անգործադրելի, և արհամարհէ այն իղձերը, որոնք ժրութիւն ու բարի նախանձ են գրգռում և մարդուս կարողութիւններն են զարգացնում, նշանակում է թէ նա իմացական ու նիւթական թմրութիւնը համարում է մարդուս օրինաւոր վիճակը:

Բայց այս ոճը շատ երկար չտևեց: Եւրոպական լեզուների. յատկապէս ֆրանսերէնի ուսումով և նրա հետեւողութեամբ, պարզութիւնը ոճի մէջ սիրելի յատկութիւն դարձաւ: Սրանով վերացաւ նաև զրաբարեանների այն առարկութիւնը թէ աշխարհաբարը մոլթ լեզու է և զրաբարի պարզութիւնը չունի: Այսպէսով աշխարհաբարը սովորել շատ աւելի հեշտացաւ քան զրաբարը:

Ահա թէ ինչպէս էր գրում Օտեան իր գեղեցիկ վիտպատը՝ Զօրայեանից քիչ յետոյ.

«Վիտպատն ենք, վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ, հոս ջուրը ծիծաղ մ'ունի,

օղբ ծիծաղ մ'ունի, երկինք ծիծաղ մ'ունի, որ անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանեն: Անտառն իր դօս տերեւոց խօշունն ունի, իր մամուսպատ ծառերը ու ծառի կոճերը, իր քարանձաւն, իր սահանքը, իր բոցավայրն և իր հովուաց հովիտը: Կը մխիւս անտառին մէջ, կը խորասուզիս և նա անհուն մթութեան խորերէն կերկերածայն թռչնոց վայուններով և անագնագոչ ծառերուն սօսափունով կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն: Քիչ մը անդին կը տեսնես որ անագին ապառաժ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես շանթը կ'արհամարհէ. իր լօռուտ կողերուն վայրի կանաչին վրայէն կաթիլ կաթիլ ջուր մը կը մղի վճիտ, փայլփլուն, զովագին և այն կաթիլը հեղեղ կ'ըլլայ, որ զմայրիս կը խորտակէ ու անհուն հովիտ մը կը փորէ իր ճամբուն վրայ. հոս ջրվէժ, հոն ջրի առուակ, հոս կը դռնէ, հոն կը կարկաչէ, հոն ամպերուն հետ թխագոյն կ'որոտայ, հոս դալարագեղ ծաղկապիւղ խտերուն եզերքը՝ մանուածապատ ման կուգայ, հոն՝ կը փրփրայ, հոս կը փայլփլայ, և արեւուն նախածագ փայլուններուն առջև կը կարմրի:

Հոն է ներդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան մէջ, և զի մարդուն ձեռքը ոչ ժպիրհ այլ համեստօրէն խառնուած է բնութեան գործօնը, անոր կամացն ու քմաց հնազանդելով. և զի բնութիւնն է որ կը տիրապետէ:

Մշուշ չունի երկինքն՝ որ այս մշուշը պատէ նաև զսիրտը. կապոյտ կը տեսնես ցերեկը, աստղունք կը տեսնես գիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են և թափանցիկ արեւին լուսովը, լոյսը քօղարկելով այնչափ՝ որչափ բարակ չղարչ մը՝ ձգուած նազելի կոյսին վառ ի վառ այտերուն վրայ և մաքրափայլ խանդավառ կուրծքին զօր և բարակ հովիկ մը վեր կը վերցնէ երբ երբեմն . . . »:

Գրաբարեանները առարկութիւններին վէճով ու հակառակութիւններով պատասխանելու հետ միասին աշխարհաբարեանները աշխատեցին բարեկարգել աշխարհաբարը: Ոմանք իրենց այս բարեկարգիչ գործունէութեան մէջ շատ չափաւոր եւ արդիւնաւէտ եղան: Սրանք են այն հեղի-

նակները, որոնք զանազան յաջող նորակերտ բառեր հնարելով հայերէն լեզուն ճախարին: Այսպէս՝ չղեկաւ, չղեկաւք, պարտաճանաչութիւն, երախտապարտ, զիւղախումբ, հրատարակութիւն, տպարան, տպարանապետ, խմբագրութիւն, խմբագրական, և այլ հազարաւոր բառեր, որոնք չկան գրաբարում և չկային դեռ աշխարհաբարում: Ուրիշներ իրենց պարզ ու մաքուր աշխարհաբար գրուած քներով՝ աշխարհաբարի պատիւը բարձրացրին և նոր գրողներին լեզուի օրինակ տուին: Եղան սակայն այնպիսիներն էլ, որոնք սխալ ճանապարհի մէջ ընկան և չըմբռնելով լեզուները կազմութեան ընդհանուր օրէնքները, ինքնագլուխ նորմուծութիւններով հնարեցին և ուղեցին մտցնել լեզուի մէջ: Այսպիսիներէց կարելի է յիշատակել՝

1. Եղիա Տէմիրճիպաշեան, որ իր «Շահնազարեանի մը խղճին պարզ քննութիւնը» (Պոլիս 1870) աշխատութեան մէջ վերացրեց կը մասնիկի գործածութիւնը բայերի սահմանականի վրայից: Այսպէսով բայը մասամբ գրաբարի ձև ստացաւ:

2. Կարապետ Իւթիւճեան, որ Մասիսի խմբագիր եղած ժամանակ, տեսեր եմ, բերեր եմ և այլն ձևերի փոխարէն սկսեց գործադրել արեւելահայոց տեսել եմ, բերել եմ ձևերը, որոնք գրաբարին աւելի մօտիկ են: Միևնոյն ժամանակ տեսնելու, իմանալու և այլն ձևերի փոխարէն մտցրեց տեսանելոյ, իմանալոյ, և այլն զուտ գրաբար ձևերը: Աւելի ուշ նոյն հեղինակը (Սրեկէք 1888) առաջարկեց փոխել արեւմտահայ տառադարձութիւնը, գրութիւն և հնչում միանգամայն, հնչել «գիր գրել» և տառադարձնել Բիրլին, Պարիս և այլն:

Բայց լեզուի վերանորոգութեան մէջ ամենից աւելի խիղախ հանդիսացան երկու հոգի՝ Ռուսինեան և Չերազ:

Ռուսինեանը ֆրանսիական յեղափոխական գաղափարներով տոգորուած մի անձ էր: Նա ուզում էր հայ կեանքի բոլոր երևոյթները յեղափոխել: Ռուսինեանը սակայն միակ չէր. այլ ամբողջ մի խմբի ներկայացուցիչը: 1853ին Ռուսինեան, Օտեան և Թնկրեան հրատարակեցին Ուղղախօսութիւնը, որ Պոլսում տպուած առաջին աշխարհաբար քերականութիւնն է: Այս

Ուղղախոսութեամբ կարելի է ասել նա-
ւում էր մի բողոքովին նոր աշխարհաբար-
Այն փոփոխութիւնները, որ առաջարկուած
էին այնտեղ, համարուեցան սրբապաշտու-
թիւն և ամէն ոք վեր կացաւ նրա գէմ: Ընդ-
հանուր պահանջին բաւարարութիւն տալու
համար որոշուեց սրբապաշտել այդ գիրքը եւ
1854ին կազմուեց մի մասնախումբ, որի
անդամներն էին Օտեան, Ռուսինեան, Պալ-
եան, Պարտիզպանեան եւ Իւթիւնեան: Բան-
ձնաժողովի արձանագրութիւններէց մի
քանիսը մնում են դեռ և հրատարակուած
են (տես Արեւելք 1898, Դեկտ. 5): Այս
խմբից Պարտիզպանեան և Իւթիւնեան եղել
են նորաձեւութեանց հակառակորդ և նրանց
կարծիքները անցել են այսօրուայ աշխար-
հաբարի մէջ:

Լեզուական նորոգութեանց մէջ ամե-
նից մեծը և ուժեղը պէտք է համարել այն
լեզուն, որ յօրինեց Մինաս Զեբաղը: Այս
լեզուն կոչուած է հեղինակի բառով «ընտ-
րողական հայերէն»:

«Ընտրողական հայերէն»ի քերականու-
թիւնը (ընդ ամէնը 3 թերթ) տպուած է
նախ հեղինակի «Գրական փորձեր» աշխա-
տութեան մէջ (Տպ. Պոլիս 1874) և երկրորդ
նրա Ազգային դաստիարակութեան (Պոլիս
1876) սկիզբը: — Երկուսը իրարից փոքր
տարբերութիւններ ունին:

Ընտրողական հայերէնը ազգի մեծա-
մասնութեան կողմից ընդունելութիւն չը
գտաւ. իրեն համակիր եղան Գր. Օտեան,
Ե. Տէմիրճիպաշեան, Մ. Փորթուզալեան
և Հրանտ Ասատուր: Առաջինը սակայն նոյն
լեզուով ոչինչ չգրեց. երկրորդը հրատա-
րակեց «Նոր կեանք» վերնագրով մի փոքր
հատոր, երրորդը Ասիա թերթի պաշտօնա-
կան լեզուն դարձրեց, իսկ վերջինը նոյն
լեզուով հրատարակեց իր «Պատանեկան
ներշնչումները» (Պոլիս 1870): Ընդհակա-
ռակը հակառակողների թիւը շատ մեծ էր,
բոլոր թերթերը դէմ գրեցին ու ծաղրեցին
նորեւուկ նորոգչին: Յիշենք սրանցից Ս.
Պոնտացի, Ներկայ հայերէնին ապագայ վի-
ճակը, Պոլիս 1879: Մինչև անգամ ոմն
Կարապետ Ստեփանեան գրեց «Նոր մահ
կամ Լեզուաքննական տետան» վերնագրով
գուարճալի մի կատակերգութիւն (Պոլիս
1880), որի մէջ գործող անձերը հայերէն

թերթերն են, որոնք նոր մահի ամբաստա-
նութեամբ դատուած են Նոր կեանքը եւ
ընտրողական հայերէնը և վերջապէս նրան
մահուան են դատապարտուած: Զերպը
պաշտպանեց իր լեզուն մի շարք յօդուած-
ներով՝ Փորթուզալեանի Ասիա և Պարոն-
եանի Թատրոն թերթերի մէջ՝ Գրիչ և Սուր-
ընդհանուր վերնագրի տակ, որոնց հաւա-
քածոն էլ հրատարակեց առանձին գըր-
քով:

Իսկ ի՞նչ էին պահանջում գրաբար-
եանները:

Գրաբարեանները նախ նպատակ ունէին
ուղղակի կենդանացնել գրաբարը թէ՛ գրա-
կանութեան մէջ և թէ՛ իրրե խօսակցական
լեզու: Յետոյ աւելի մեղմանալով՝ ընդու-
նում են խօսակցութեան մէջ աշխարհա-
բար, բայց պահանջում են որ գոնէ գրա-
կանութեան լեզուն գրաբար լինի: Այսպէս
էր մտածում Գարագաշեան, որ Յ. Գուր-
գէնի հետ միասին հիմնեց 1886ին ձաշակ
Ոսկեղէն դպրութեան զուտ ոսկեգրեան
գրաբար ամսաթերթը: Այդ թերթը միայն
մէկ և կէս տարի կեանք ունեցաւ: «Ինչո՞ւ
համար բացինք այս մեծ դպրոցները, ա-
սաց մի օր իմ այդ սիրելի և ամենաբարի
ուսուցիչը՝ կեղերոնական վարժարանի աւագ
դռան սիւների առաջ կանգնած, եթէ ոչ
գրաբարը նորէն կենդանացնելու համար»:
— Երրորդ չըջանին գրաբարեանները աւելի
մեղմանալով ընդունում են աշխարհաբարի
իրաւունքը գրականութեան ցածր աստի-
ճանների համար, սակայն բարձրագոյն զը-
րականութիւնը, յատկապէս տաղաչափու-
թիւնը պահանջում են գրաբար: Այսպէս
էր մտածում մի ժամանակ Եղիա Տէմիր-
ճիպաշեանը և իր ոտանաւորներն էլ գրա-
բար էր գրում: Այս ժամանակ կային այն-
պիսիները որ գրում էին մի այնպիսի լե-
զու, որ գրաբարի և աշխարհաբարի մի
այլանդակ խառնուրդ էր, ուր թունդ զը-
րաբար ձևերի մօտ գտնում ենք յանկարծ
մի «ամենառամիկ» ձև: Այսպէս օրինակ՝

Ընելով զնոսա ինքնօրէնս (Գարագաշ-
եան, Քնն. Պատմ. Բ. 46):

Խնդրեց ի կայսերէ չընել զնա հպատակ
Հերովդի (անդ, Գ. 257):

Իբրեւ այսպիսի խառնուրդ լեզուի նը-
մոյշ տալիս ենք հետեւեալ հատուածը.

«Ինչպէս կը տեսնուի՝ հնգեակ մատե-
ք

նագրութեանցդ աղերսն այնպիսի է որ մեք հարկաւորեալ եմք նկատել զայնոսիկ անբաժան յիրերաց, իրբ միոյ անձին սեփականութիւնս. անմարթ է ուրիմն ըսել թէ Կորիւն բանաքաղած է յօտարաց, երբ օտարք — միւս մատենագիրք Սսկեղարու — չգիտեն բնաւ իսկ ամենեւին և ոչ զմի ի բանից երբորդ տեսակին, եւ յերկրորդ տեսակին՝ թէ և զբարսն զիտեն, ոչ նոյլին խառնուածովք և կազմութեամբք կը շարագրեն, ոչ նոյլին դասաւորութեամբք, այլ Կորիւն ինքնին է որ կը խօսի ծայրէ ի ծայր ի Վարս Մաշքոցի իւր յատուկ բաներով և ձևերով՝ յորոց զոմանս արդէն ի կիր արկած էր յեւթաղ և ի Մակարայեցիս» (Նորայր, Կորիւն Վրդ. էջ 49)։

Այս բոլորը վաղանցուկ եղան և մնացին լոկ իբրեւ անհատական ջանքեր ու փորձեր։

Գրարարեանները վերջին աստիճանը կազմում էին այն շատ մեղմացած տիպերը, որոնք ուրիշ բան չէին ուզում, եթէ ոչ աշխարհաբար գրութեանց մէջ երբեմն երբեմն խառնել զբարար ոճեր ու դարձուածքներ։ Իբրեւ այս վերջինների ներկայացուցիչներ մնում էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանները, որոնք այսօր նոյնպէս հրաժարած են իրենց փափագից։

Աշխարհաբարը յաղթանակեց ժ.թ դարի վերջում և այսօր նրա մի ճիւղը՝ արեւելահայ գրական լեզուն ոչ միայն բարձրացել է Հայաստանի Համալսարանի ամբիոնը, այլ և Խորհրդային Հայաստանի կառավարութեան Պետական լեզուն է, պաշտօնապէս ճանաչուած ամբողջ Միութեան մէջ։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՅԻԻ ԳԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Ներսէս ծառայ Քրիստոսի ևս անհասանելի կաւոքն Աստուծոյ Նայիսկոպոսապէս և Կարուղիկոս Ասկնայն Հայոց Յայրապոյն Պատրիարք հաւաքակալան նախանձար արոտոյ արարեալան մայր եկեղեցոյ սրբոյ կարուղիկէ Էջմիածնի։

Պատուելի միաբանութեան հայոց հոգեւորականաց և մարմնաւորականաց Հայոց Թաւրէշ քաղաքացւոց նուիրեմ զողջոյն Քրիստոսական և աղօթս առնեմ զի հզօրացի ամենաողորմած հովանաւորութիւն Աստուծոյ ի վերայ մեծաց և փոքունց ձեր ամենեցունց արանց և կանանց այժմ և յաւիտեան որոց և ծանուցանեմ զի յայտմ երեկոյի ընկալայ զբազմաստորագիր գրութիւն ձեր ի Նոյեմբերի 19, զանազան ջատագովութեամբ յաղազս բազմաջան մեծ աշխատութեամբ սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի Աստուածախնամ այդմ վիճակի նախկին Լուսաւորչի Հայոց դամբարանական վանից սրբոյ առաքելոյն Թադեոսի զորս վաղագոյն ևս որպէս և զուք վերայիշատակէք յայտմ ձերում զրի գրեալ

ուրէիք մեզ բաւական հանգամանօք և զուք և ինքն յիշեալ եպիսկոպոսն ըստ որոյ տարակուսական մեզ գտանի թէ առ ինչ նպատակ իցեն վերակրկնութիւնք միեւնոյն լուրակութեանց և առ այնս շատագովութեանց նորուն սրբազնութեան։

Եկեղեցի հայոց բարձրագոյն միշտ ձայնէ վասն Աստուծոյ ամենագոր ստեղծողին մերոյ՝ թէ գործք քո օրհնեն զքեզ և առաւել բարձրացուցանեն ըստ որոյ և վամենայն զմարդիկ օրհնեն գործք իրեանց և բարձրացուցանեն զանուն գործողաց։ Եւ գրեալ իսկ է ծառ ի պողոյ իւրմէ ճանաչի, ըստ որոյ յոյժ կանուխ է այսօրինակ յաճախելն շատ գովութեանց ստորագրութեամբ բազմութեանց այն զի բանաւոր կամ գրաւոր վկայութիւն միոյ անձին վասն որպիսի և իցէ գործոց մեծաց կամ փոքունց միշտ հաստատուն է յորժամ գործն վկայեցեալ իցէ ակներեւ յանդիման աչաց տեսութեան բազմաց կամ սակաւուց. այժմ դեռ գործոց յայտնութիւնք վասն սկզբնաւորութեանց ուսումնարանի է բաց գրեալ է թէ

վախճան պատկել զգործն և ձեր դավաժութիւնք և շնորհակալութիւնք վասն սկզբնաւորութեանց ուսումնարանի գրեցեալք են մեզ և յինքենէ որրազան Սահակ եպիսկոպոսէ քանիցս անգամ և մեք ևս ի մանկութենէ հետէ ծանօթ եմք միմեանց և ոչ անծանօթ։ Այլ զի ի սմին ժամանակի հասարակեալ գտանի զի վասն ամենայն գործակատարաց մերոց բազմութիւնք ժողովրդեան առաքին առ մեզ զզանազան զովաբանութեանց զգլխութիւնս որպէս չէ եղեալ սովորութիւն յամենայն ժամանակս նախանցեալ կաթողիկոսաց. ուստի յաճախէն այսպիսի բազմատորագիր ջատագովութեանց առաւել տարակուսեցուցանէ զմեզ քան ապահովեցուցանէ. առ որ յայտնեմ ամենայն ժողովրդեան զի յամենայնուրեք ի միջի քաղաքակիրթ ազգաց արհամարեալ է բազմատորագիր պատմաբանութիւն վասն որոց և իցէ գործոց մեծամեծաց կամ փոքրագոյնից. ուստի մատուցանելով ձեզ զլիմ շնորհակալութիւն վասն շնորհակալութեանց ձերոց զսրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի ձեր և առաւել շնորհակալ եմ վասն ձեր ջատագովութեանց նորուն բարեջանութեանց յաղաքս օգտի հօտին յանձնեցելոց ինքեան և մեք պարտաւոր զմեզ յամարիմք մտղթել յամենագօրէն Աստուծոյ յարատեւել զայնպիսի հովուական բարեջանութեան նորա զի ըստ ձեր վկայելոյ զանձն իւր ունիցի հանապազ զինել ի վերայ հօտին հաւատացելոյ իւրումն հովուութեանց որով փառք նորա որպէս ի բազմութեանց հօտին գնեցելոյ արեամբ Քրիստոսի այնպէս և յինքենէ ի Քրիստոսէ յիսուսէ լինելոց է փառաւորեալ որպէս մարմնով այնպէս և հողւով։ Ողջ լերուք և մեք եմք և եղիցուք միշտ աղաչաւոր առ Աստուած վասն օգահպանելոյ զձեզ և զամենայն ազգն Հայոց ի հովանաւորութեան ամենաբաւական խնամակալութեանց իւրոց։

Յամի աղգական 1301, և փրկչական 1852, Հմբ. 391 Դեկտեմբերի 2 ի սուրբ Էջմիածին

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ն Ե Ր Ս Է Ս

Ներսէս ծառայ Քրիստոսի և անհատանկի կաթօն Աստուծոյ եպիսկոպոսայեւ և Կարողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարկ համազգայն և նախաւեճար արքայ տաւառեան մայր եկեղեցոյ արքայ կարողիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի Թէվրիզոյ ընկալեալ զգրութիւն յամենան Մարտի և այսօր ի 16 Ապրիլի յաւուր Հինգշաբաթու յետ կէս աւուրն բերեալ հասոյց մեզ այլազգի զարգատար զմի բեռն յղեալ նիւթեղենոն ի ձեր Սրբազնութենէ և զկնի երեկոյեան ժամուն եկեալ ստիպեաց թէ ունի ինքն վերադառնալ ի սմին գիշերի. ուստի առանց բանալոյ զբեռն և հասու լինելոյ ամբողջութեանցն տուաք նմա զայս գիր վասն հասուցանելոյն մեզ զբեռն յանձնեցեալ ինքեան. իսկ լիալիր պատասխանի վասն ամենայն գրեցելոցն ձերոց զբեացուք պօշտիւ յետ սուրբ Զատկին և մնամք ձեզ ամենիւ բարեացակամ։

Յամի աղգական 1302, և փրկչական 1853, Հմբ. 172 Ապրիլի 16 ի Թիֆլիզ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ն Ե Ր Ս Է Ս

Ներսէս ծառայ Քրիստոսի և անհատանկի կաթօն Աստուծոյ եպիսկոպոսայեւ և Կարողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարկ համազգայն և նախաւեճար արքայ տաւառեան մայր եկեղեցոյ արքայ կարողիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի Թաւրիզոյ քաղաքի և Ատրպատական աշխարհի հայոց ծանուցանեմք, զի նորին գերազանցութիւնն Նիկիոյն Անգլիկոսի Սրբ. կօնսուն Թաւրիզոյ գրութեամբ իւրով առ մեզ ի 23 Մարտի համարաւ 232 յիշեցուցանելով մեզ յազապ ինչ ինչ արժանաւորութեանց Տ. Գարրիէլ աւագ քահանային Թաւրիզոյ Հայոց ընդ որոց և յաղաքս հարազատութեանց նորա առ ամենողորմած կայսերական մե-

ծովի լին և մտերմութեանցն առ իւր գերազանցութիւն արժան էր ցոյցելուլ զնապարգեաց լանջական խաչի առ ի մէջ մեք ևս զորով ծանօթ ի վաղուց յաղագս նորուն գերազանցութեան բարեկամութեանցն ընդ մեզ և շնորհացն առ մերազնեայս, թէպէտ և անծանօթ էր մեզ յիշեալ Գարրիէլ աւագ քահանայն, և չեն յայանեցեալ մեզ անդր քան զքահանայադործութիւն նորա, այլ անձնական բարեջանութիւն քնորա վասն եկեղեցւոյ և վասն ժողովրդեան, բայց վերկայութիւն նորուն գերազանցութեան վասն հարազատութեանց նորա անսան և Սթոուտոյ մեծ կայսերութեան ամենայն ուսուցչ հովանորոչի եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ժողովրդեան ամենայն հաւատացելոց ի սուրբ Աստուածութիւն նորանա և հաճոյական նորուն գերազանցութեան քահանայավայելուէ՝ բարեպաշտօրէն կենցաղավարութեանցն առաքեցաք ընդ այսմ լանջական խաչ հանդերձ մերով կոնդակալանուն յիշեալ քահանային եղեալ ի ծրարի գրութեան մերում առ նորին գերազանցութիւն, և խնդրեցաք զի նորին գերազանցութիւն՝ ընդ ընկալնուն զկոնդակ մեր և զխաչն լանջական հրաւիրեցէ առ ինքն զձեր Սրբազնութիւն և զԳարրիէլ աւագ քայանայն և ձերով ձեռամբ արկցէ զխաչն ի պարանոց քայանային և տացէ նմա զկոնդակն վասն պարգեաց այնմ խաչի, զոր և զուք ունիցիք հրատարակել որպէս արժանագատել լինիցի։ Ողջ լեր։

Հմբ. 207 Յամի ազգական 1302 և փրկական
1853 Մայիսի 9, ի Թիֆլիզ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀՍՅՈՑ
Ն Ե Ր Ս Է Ս

Ներսէս ժողայ Քրիստոսի ևս անկասանելի կառօն Աստուծոյ նախնապապի ևս Կարուղիկոս Ամենայն Հայոց Մայրապոյն Պատրիարկ համագրական նախնեմար արքայ արարական մայր եկեղեցւոյ արքայ կարուղիկի Լեւիաթանի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի առաջին Լուսաւորչի Հայոց Սրբոյն

Թագդէոսի Առաքելոյն վանաց և վիճակի հայոց Ատրպատական աշխարհի ողջունիւ Քրիստոսական ծանուցանեմ զի ընկալեալ զգրութիւն ձեր ի 13 Օգոստոսի համարաւ 88. վասն յառաջագրութեանց ձերով առ առջնորդական հոգունակութեամբ սկզբնաւորեալ շինութեանց և կարգաւորութեանց ուսումնարանի Հայոց ի Դաւրէժ քաղաքի, ընդ որում ընկալեալ և զգրութիւնն հարազատից սրբոյ Մայր եկեղեցւոյ իւրեանց կաթողիկէ Էմիլիանի և մեր մեծարու Աղայ Առաքելի Մեղիք Մինասեան և եղբօր նորա բարձրագահ Ստեփան Սանի բազում ուրախութեամբ սրտի իւրեանց վասն սկզբնաւորութեանց այնմ ուսումնարանի, և առաւել ջատագովութեամբ վասն ձեր առաջնորդական յատկացեալ պարտաւորութեամբ հոգունակութեանց վասն ուսումնարանի մանկանց ժողովրդեան հօտին հաւատացելոյ ձերում առաջնորդութեանց բազում մխիթարութեամբ հոգոյ մերոյ մատուցանեմք և մեք ձերում սրբազնութեան գլխեմ գոհունակութիւն մեր յաղագս կարելոյ Աստուածահրաման առաջնորդական բարեջանութեամբ ջատագով ձեզ վիշխանն և զհասարակութիւն ժողովրդեան որդւոց սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց։

Փառք տեառն Աստուծոյ մերոյ որ արժանի արար զմեզ լսել զայսպիսի շնորհապարտութիւն ժողովրդեան յաղագս իւրեանց վիճակաւորի քան զոր առաւել մխիթարութիւն ոչ կարէ լինիլ մերում սրտի զուցէ և ամենից եկեղեցական ծայրագոյն տեսչութեանց։ Արժանաւորեցէ Տ. զայսպիսի ջատագովութիւն ձերում բարեջան առաջնորդութեանց յարաձգել ընդ ձերում պատուական կենաց ի փառս Տեառն Աստուծոյ և ի մխիթարութիւն սրտից բազմավիշտ ազգի հայրենեաց։

Մեք յամսեանն Դեկտեմբերի ամին անցելոյ վասն համազգական և Աթոռային հարկաւորագոյն գործոց եկաք ի Թիֆլիզ զիդաւորութեամբ վերադարձի յամսեանն Ապրիլի, այլ տակաւին մեամբ աստեն յաղագս տալոյ զվախճան անդանց առնելի հոգունակեացն յաղագս ընթացից եկեղեցական և հոգեւորական պարտաւորութեանց ենթադրեցելոց կառաւարութեանց ընդհանրական կաթողիկոսն և պատրիարկական ծայրագոյն տեսչութեանց և արժանաւորեցէ ա-

մենարաւականն ոչ ևս առաւել անազան ժամանիլ ի ծոց սրբոյ Մօր մեր լուսոյ:

Յարգելով զվազնջական շարունակութիւն ջատագովութեանց նորուն արժանանձնութեան աղայ Առաքել Մելիք Մինասեան հարազատի մեր և սրբոյ եկեղեցւոյ հայրենեաց ընդ նմին և ձերում սրբաշնութեան պարգևեցաք Տ. Յովսէփ քահանային Տ. Յովսէփեանց արժաթեայ ոսկէզօծ լանջական խաչ զոր հանդերձ մերով կոնվակաւ առաքեցաք ընդ այսմ յիշատ հարազատի մերում յորմէ ունի ընկալնուլ կրօն զայն առ ի նմանէ ջատագովի քահանայն:

Յազազս մնացորդացն զկնի վախճանի սրբազան Նիկողայոս եպիսկոպոսին եղիւոյ ցարդ ընդ կնքով գրեալ եմ նորուն արժանանձնութեան աղայ Առաքելին և ձեզ ևս գրեմ, զի ունիմք գրել Ատենակալացն ի Սինօգի էջմիածնի անօրինել որպէս արժան գատել ունիցին և հրամայել զպատկանեալսն սրբոյ վանիցն Թադդէոսի Առաքելոյ յանձնել ձեզ և որոյ պատկանի և զպատկանեալսն Աթոռոյ էջմիածնի առաքել ի Սինօգն նորա:

Յազազս ուսումնարանին ըստ ձեր յառաջագրութեանց գրեսցուք ոչ ևս անազան զկոնդակ յանուն միաբանութեան Հայոց Թաւրիկոյ եկեղեցականաց և ժողովրդականաց. Ողջ լերուք:

Յամի ազգական 1302, և փրկչական 1853, չմբ. 418 Հոկտեմբերի 21, ի Թիֆլիզ:

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
Ն Ե Ր Ս Է Ս

Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ



ՃԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

Այս օտի եւս Ս. Արթուրս ժողովուրդաց Վարժարանը տուա իր հոգեւոր հունձը՝ յանձինս չորս նոր Սարկաւագներու:

Ժողովուրդաց Վարժարանի Դ. դասարանի վեց աւակներէնք աւարտած ըլլալով իրենց քառամեայ ուսումնական երջանը՝ հրաւիրուեցան, Տեսչութեան կողմէ, Տալու իրենց վերջնական որոշումը:

Անոնցմէ չորսը Տնօրէն Ժողովոյ առջեւ յօժարութիւն յայտնած եւ ուխտագիր ստորագրած ըլլալով ընդունելու կուսակոն եկեղեցականութեան լուծը, կիսասարկաւագութեան աստիճանի տուչութիւնը կատարուեցաւ՝ Վերափոխման բարեկեցականի Կիրակիին, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, «լցաք» են անմիջապէս առաջ. իսկ Ս. Պատարագի մատուցման միջոցին, սոյն չորսը ձեռնադրուեցան Աւագ Սրկ.: Ս. Պատարագ Հայրը կատարեց ձեռնադրութիւնը: Խորհուրդ լակն եւ Լուսարարացե Գեր. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեան: Մտառուչ եւ պահը երբ չորս նորընծայները ծնկաչոյ կը յառաջանային դէպի Ս. Սեղան: Յուզում էին նոյն պէս իրենց, երբ ծնւաբայ եւ դողահար վերելակելով Ս. Բեմին մարմարեայ սանդուխէն, «Երկիւղի ու հաւատով» յառաջ կը մտնէին դէպի Սեղանը իրենց Ս. Զոհին. զգացում էին նաեւ ամենքը, Ս. Պատարագը եւ Միաբանութիւնը, իրենց մտախպարին շարունակութիւնը զիտելով անարատ հոգիներու այս հոյլին մէջ, եւ ժողովուրդն ինքնին՝ ուրուն համակիր նայուածքին առջեւ ամէն օր հասակ նետեր եւ շնորհօք բարգաւաճեւ էին անոնք ամէն օտի: Յուզումին ալիք լայնցաւ հոգիներուն մէջ, երբ ընծայեալները երեսին ժողովուրդին դարձուցած, աչք յեկինս, աւխարհէ հրաժարման իրենց ուխտը կը հրատարակէին ձեռամբարձ. մինչ դրպիւք եւ միաբանք երիցս կը վերերգէին պատկառանքով եւ արայոյց. «Աստուծային եւ երկնաւոր շնորհ... կոչե...» ն: — Յաջորդեց «Ես դեմ ձեռս»՝ արարունդ, իւրաքանչիւրին համար ուրոյն ուրոյն. ու երբ կը լսուէր «Դուք ամենեքեան աղօթս արարեք զի արժանի լինիցի սա անարատ պատեւ զաստիճան սարկաւագութեան...» ք, բո-

լոր սիրտերեն փրբած միակ բառն էր «ամեն»։ — Հազան վերջապես սուրբ ուրախին մա-
 ֆուր ժապաւենը, սաացան օրհնուած բուր-
 վառը եւ իրաւունք խնկարկելու, ու Ս. Ա-
 լեւսարանը՝ ի ձեռաց իրենց հոգեծնողին, ա-
 օնուրիւն կարգալու զայն յունկն հաւատա-
 ցելոց, եւ իրաւունք՝ վերաբերելու Ս. Խոր-
 հուրդին ընծայքը. ըսին իրենց անգրանիկ
 «Եւ եւս»ը իւրաքանչիւրը երեկնելով զայն
 զգուշածայն քաղցրութեամբ, եւ, ընդունելէ
 վերջ երեքապիկ օրհնութիւնը իրենց ուխտին,
 կեցան Սեղանին վրայ, երկուստէ Ս. Խորանին։

Յաւատք Ձեռնադրութեան, Նորին Ամեն.
 Ս. Պատրիարք Հօր կողմէն խօսեցաւ ժառ.
 Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ Հոգ.
 Տ. Եփրեմ Վրդ. Տեղեկեան։ Ասոնք, ըսաւ,
 ցոյց տալով չորս նորընծայեալները, որոնք կը
 կենան այս պահուստ Ասուծոյ Խորանին
 առջեւ, իբրեւ սպասաւորներ Հայ Եկեղեցւոյ
 մեծ սպասին, ծրագրուած մէկ մէկ խոս-
 տումներ են, կեանքեր՝ հապտուած սրբազան
 նպասակի մը։ Համեմատութեան դրաւ անոնց
 կեանքն ու ասպարեզը ուրիշ երթաստարգ-
 ներու ասպարեզին հետ, որոնք կ'ունենան
 կեանքի վրայ աւելի շեղ հորիզոններ, որոնց
 աղեղը աւելի ընդարձակ կ'ընդգրկէ այն կես
 դարը զոր մարդիկ կեանք եւ ապագայ կ'ան-
 ուանեն իր բոլոր քաղցրութիւններով, անա-
 կրկնակներով եւ կարելի հեռապակներնե-
 րով. մինչ ասոնց՝ յարեց, ամենեւնի բախտորոշ
 պարագային, վստական խցիկի մը շատ համեմատ
 օրջանակը, եւ Ասուծոյ ու մարդոց ծառայե-
 լու պարտականութիւնն է միայն։ Անոնք այս
 կերպ կ'ընեն անզոհելի զոհը. սակայն իրենց
 մատաղ կեանքերու այս մատաղը դիմաւոր-
 ուի թերեւս շատերէն Տեսուծ համակրանքով։
 Կեանք հասկնալու միամտութիւն մը կայ այս
 մտածումին մէջ, ըսաւ. ցորենահասը պէտք է
 մեռնի, իր բազմապիսի արդիւնները կա-
 րենալ ծնելու համար։ Սակայն մի խաչչիք
 աշխարհի մակերեսային այս երեւոյթին.
 մարդերու մէկ մասը միայն Տեսութեամբ
 պիտի նայի ձեր ետեւէն, այն մասը որ չի
 կրնար ըմբռնել իմաստը ձեր այս զոհողու-
 քեան. մէկ ուրիշ մասը պիտի հիանայ ձեր
 վրայ, արդի արժեքաւորելով նուազ բացասե-
 լի, սակայն խորապէս իրական արժանիք մը
 տեսնելով ձեր կեցողութիւն մէջ։ Եւ աւելի
 բան նիւթ ու սրբազան է այս վերջին միտա-
 ծումը. վասնզի երբ չունիք ձեր ասպարե-

զին վրայ փայլուն պաշտօններ, դիրքեր, հա-
 բուս եւ հանգստաւէ կեանք անցնելու պա-
 տեհութիւններ, ունիք այս բոլորը արժեւորող,
 զանոնք վեր բռնող ոգեղներ, հոգիի, մտքի
 եւ արժեքներու գերագոյն սպասը, նշխար-
 եալ բեկորներ հաւաքելու, այրիին ու որբին
 արցունքները սրբելու միսիրարար պարտա-
 կանութիւնը, եւ վերջապէս Ասուծոյ ծա-
 ռայելու գործը որ վեր է կարելի բոլոր ծա-
 ռայութիւններէն։

Սրբազան այս խորհուրդին մէջ շնորհա-
 զարգուած իրենց այս պակեքը, ըսաւ, ինծի
 կը յիշեցնէ այն օրը, երբ իրենք իրենց խո-
 նարն հիւղակներէն այս Հաստատութեան կու-
 գային բաժան բաժան հոգիով, անյարիր միտ-
 քով եւ խուլ ազդեցութիւններու ներքեւ, կնի-
 քին տակ այն բոլորին զոր մեր ընկերային պայ-
 մաններն եւ նախազգրին հարուածները դրեր
 էին, եւ որոնք մեր Սփիւռքէն այժմու ընկր-
 կումը կը ստեղծեն իր բոլոր մարդերուն վրայ։
 Ինչ հակապակեք այսօրուան հետ, հիմը ա-
 նոնցմէ քափեցաւ փոշի առ փոշի, եւ նորը
 շինուեցաւ աղիւս առ աղիւս, ընելու հա-
 մար գիրենք այն ընտիր անօրները զորս կը
 տեսնենք։

Ահ երբեք պիտի չմոռնամ այն սրա-
 գրաւ տեսարանը, երբ իրենց ծնողները սր-
 տաչին յուզումով յանձնեցին զիրենք այս Հաս-
 տատութեան։ Նո՛րք տուած չէ սակայն այս ժո-
 ղովուրդը իր լաւագոյնը, պահելու համար իր
 հոգիին ու մտքին արժեքները։ Մեր ժողովուրդը
 գինն է այս զոհողութեան, այն ոգիին որուն
 չէ խնայած բնաւ իր արեան վերջին կաթիլը,
 անցնելով ընդ հուր եւ ընդ սուր, եւ իր խոր-
 տակուած ուսերուն կրելով իր սրբութեանց
 տապանակը. այդ ոգիով է որ կը լեցուիք
 դուք այս պահուստ, որուն համար աշխարհ
 թերեւս ձեզի կը նայի Տեսուծ համակրանքով՝
 բայց խոր հիացումով։

Այս խորհուրդին ու սրբազան հանդե-
 սէն վերջ, դուք, ըսաւ Հոգեւորդն Հայրը,
 սկիզբը կ'ընէք ձեր նոր կեանքի նորոգուած
 երեսին. քեզ սկիզբ, սակայն ես պիտի ու-
 զեի տեսնել զձեզ ամբողջ, մինչեւ ծայրը ձեր
 այս կեանքի տապարեզին, կարենալ քսելու
 Առաքեալին հետ «Զբարւօք պատերազմն պա-
 տերազմեցայ, զընթացս կատարեցի, զհաւատսն
 պահեցի»։ Կ'ուզեմ հաւատալ քե այս պահը
 բնաւ պիտի չբաժնուի ձեզմէ, ձեզի սպասող
 կես դարու ընթացքին։ Դժուար անհուս,

բայց հոգիներուն համար որոնք գաղափարի բոցն են բռնկած, ոչինչ կայ անկաշի: Պաներ կան, բաւ, կեանքի մեջ, անմեղ պաներ, զորս տարիներու անցուկն ու մեղաւորութիւնը չեն կրնար ջնջել մեր յիշողութենէն: Լուսաւոր լեռնաշագարթներու կը նմանին անոնք, կեցած մեր յիշողութեանը մեջ. անոնց շեղութիւնը բնաւ չի տկուցիր կեանքին, առօրեային: Ու ամէն մարդ իր կեանքին մեջ սահմանուած է ունենալու այս կարգի պան մը: Պետք առաջադրուած լեռան վրայ, այդ պանէն առաջ, իր ամբողջ կեանքը եղած երեսմբ հասարակ տեղիներու, սակայն յայտնութեան այդ տեսարանէն վերջ, բոլոր մարտիրոսները, կասկածները տեղի տուին, եւ ինք կեցաւ դեմ յանդիման Աստուծոյ լոյսին. այդ վայրկեանին սխալագոյնը երբեք չմարեցաւ իր հոգիին մեջ: Այդ կարգի անմեղ պաներէն այցուեցան նոյնպէս Պողոս Առաքեալը՝ Իսմայէլոսի նամբուն վրայ, եւ Յայիւն, Հին Ռայիսի մեծ մարգարէն, իր առաքելութեան սկզբնաւորութիւնը նուիրագործող տեղիքին մեջ:

Յիշեցեք միշտ այս փառաւոր պանը ձեր կեանքին մեջ, զայն նկատելով ձեր գիտակցութեան լուսաւորութիւն լուսազոյն մէկ պատկերութիւնը. ուր դուք իրապէս ինքզինքնիդ եղաւ, աղբերացաւ, լուսաւորուեցաւ, եւ ունեցաւ Աստուծոյ հետ կենդանի դեմիանդիմանութեան վաճառքն վայրկեանը, կենելով ձեր հոգիներու կարմիր ուխտը, Աստուծոյ եւ մարդոց ծառայութեան նուիրուելու գործին: Այս լուսաւոր պանն ունի պէտք է դառնան ձեր կեանքին բոլոր օրերը, որուն մեջ դուք գնդ տեսաւ ամբողջ, ուր ձեր հոգին կարգաց իր նախապայքը եւ մարգարեացաւ: Դժբախտ են անոնք, որ չունին այս կարգի պաներ իրենց կեանքին մեջ:

Իբրեւ Հայ եկեղեցւոյ զաւակներ եւ պատկաններ, բաւ, նկատելին տակն էք այն փառաւոր մարգարէն, որոնք մեր եկեղեցւոյ ոսկի փառքը կերտեցին մեր լեռներուն չափ ամուր, մեր հոգիներուն չափ խորհրդաւոր, եւ մեր երկրին չափ գեղեցիկ: Վասն իմ քե այս պահուած ձեր մտածութիւնն առջեւէն կ'անցնին Ս. Մեսրոպը, Նարեկացին, Շնորհալին եւ նմաններ, որոնք ձեզի նման այս ուրաքը կ'ենցին, եւ այդ քաղցր լուծին տակ անուշեցին մեր կեանքին զաւնորութիւնները:

Կը խորհիմ քե յուզումին տակն էք նոյնպէս այս Հասարակութեան մեծ հոգիներուն, որոնք իրենց անկաշիի զոհողութիւնները տուին այս Արքային, եւ անունները՝ մեր պատմութեան: Ու կը խայտան, բաւ, անոնց հոգիները իրենց յաւիտեական անմահութեան կայքին մեջ, վասնզի անոնց գործն ու մտածումն է որ կը շարունակուի: Ամէն անգամ որ ձեռնադրութեան մը շնորհաբաշխութիւնը կը կատարուի այս սեղանին վրայ, կանքեղ մը կ'աւելնայ անոնց արժէն կերտած լուսաւորութեան տաճարին մեջ:

Եւ անցեալի այդ բոլոր փառքերը այս պահուած կ'ընեն իրենց խորհրդաւոր տղանցը՝ ձեր հոգիին ու մտքին առջեւէն, կը մեկնեղուին փաղանգ առ փաղանգ, ըլլալու համար *տեսիլքը, յայտնութիւնը, հոգին*, ամբողջութիւնը Հայ եկեղեցիին, ոսկեծիր տղակի մը պէս քով քովի բերելով ներկան ու անցեալը, բխտանեալան մեր դարաւոր ժառանգութեան:

Զգացեք ինքզինքնիդ միշտ այս յուզումին տարած տղաւորութեանց ներքեւ, ու պիտի պատկանուիք վաստակող սերմերէն, որ մեր օրերու կեանքինն են: Վասնզի այս մեծ յիշատակներուն հետ, քովն ի վեր անոնց, կան հաւասարապէս մարդկային փոքրութիւններ. մի՛ տեսեք այդ հոգիներէն, մանաւանդ մի՛ իջնեք անոնց. ի՞նչ գեղեցիկ է փոքրութիւններու քովէն անցնիլ արհամարհան ու հպարտ: Անեցեք այդ հպարտութիւնը կեանքի փոքրութիւններու հանդէպ, եւ խոնարհութիւնը՝ մեծութեանց նկատմամբ:

Յետոյ աւելցուց. ձեզի իբրեւ կենդանի օրինակ ունիք Նորին Ամեն. Զեր Հոգեւոր Հայրը, որ իր կիսադարեան բազմադիւն եւ աննահանջ կեանքով ձեզի նման հարիւրաւորներ առաջնորդած է այս կեանքին ու շնորհին: Զեր մասալ հոգիներուն իբրեւ օրինակ չկայ աւելի գեղեցիկ յարացոյց քան իր կեանքը: Այս առթիւ Զեզի հետ միասին կը մաղթեմ ի արեւ որ Տերը բազմաթիւ տարիներ պարգեւէ Նորին Ամենապատուութեան, կարենալու համար Զեզի, եւ ձեզմէ վերջ եւ կողներուն բաշխել աւելի բարձր շնորհներ ի փառս Աստուծոյ, Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ եւ Ս. Արքային:

Նորընծայ Սարկաւաղները նոյն ժամէն իսկ սպասարկել սկսան Ս. Պատարագին: Ահա իրենց անունները.

Կարապետ Սարկ. Մկրտիչան՝ ծնած Պաղտաս 1920 ին, Զեյթունցի ծնողք, նախակրթություն ստացած ի Հալեպ. 1936 ին ընդունվում ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է փայլուն յաջողութեամբ:

Մինաս Սարկ. Գասպարեան՝ ծնած Մարտե 1921 ին, նախակրթություն ստացած ի Հալեպ. 1936 ին ընդունվում ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է փայլուն յաջողութեամբ:

Յարեթ Սարկ. Վրթանէսեան՝ ծնած Փոքր-Սայիս 1919 ին, Սուէիացի ծնողք, նախակրթություն ստացած զերմանական ուրբանոցին մէջ. 1935 ին ընդունվում ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է լաւագոյն յաջողութեամբ:

Յովհաննէս Սարկ. Կարապետեան՝ ծնած Նօզղաս 1920 ին, նախակրթություն ստացած ի Հալեպ. 1936 ին ընդունվում ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է լաւագոյն յաջողութեամբ:

Սիոն, յանուն բովանդակ Միաբանութեան կը մարքե որ ամենքն ալ լինին «Մշակ առանց ամօրոյ» ի ծառայութիւն մեր նուիրական հաւատքին, սիրեցեալ ազգին եւ Ս. Արքուդոյ:

Ժ Ա Ռ Ա Ն Գ Ա Ի Ո Ր Յ Ո Ւ Ն Ե Ր

Դալ շրջանի ժառանգաւորաց Վարժարանի համար աւակեցեանք ընտրելու պարտականութիւնը Ս. Արքուդ Պառ. Տնօրէն ժողովոյ կողմէն յանձնուեցաւ Վարժարանիս ուսուցիչներէն Հոգ. Տ. Արքուն Վրդ. Հասիսեանի: Հայր Արքուն Մայիս 20 ին մեկնեցաւ նախ Պէյրութ, ապա Դամասկոս ու Հալեպ, ու այս նպատակաւ իրեն ներկայացող վաթսուցէ աւելի քննաձեռններէն ընտրած է 15 փափկամայն եւ ուշիմ աւակեցեանք, պատկերով իր առաքելութիւնը շնորհաւորելի արդիւնաւորութեամբ:

Խօսած է նկեղեցւոյ բեմերէն, վարժարաններու աւակեցեանքուն, եւ երեսասարդաց միութիւններուն, անոնց անկելով Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր ողջոյնները, եւ իր առոյգ հոգիին կազմույրը: Ամսուան մը բացակայութենէ վերջ, Յունիս 20 ին վերադարձաւ Ս. Արքու:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ Ե Ի Բ Ե Մ Ա Կ Ա Ն Բ

✱ 4 Օգոստոս կիր. — Վարդապետ. Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր փրկութեան անհանգստութեան պատճառաւ, երէկ երեկոյ կարելի չէր եղած «Հրաշափառ»ի արարողութիւնը կատարել: Այսօր, լուսարարապետ Տ. Կիրակ Վրդ. Խարայէլեան, կը պատարագէ կալիստոսական թաղով, եւ կը քարոզէ քնարան առնելով «Եւ յետ յեջ աւուրց առնու ընդ իւր Յիսուս... եւ յայլակերպս եղի առաջի նոցա» քնարանով: Ներկայացուց տօնը իր երբեակ երեսներով, իրբեւ Քրիստոսի աստուածային հրաշալի յայտնութիւն, իրբեւ յիշատակ ազգային պայծառակերպութեան, հեթանոսական կրօնէն ի քրիստոնէութիւն դարձով, եւ երբորդ իրբեւ տօնախմբութեան օր Առաքելահաստատ մեր Ս. Աթոռին: Մատնանիշ բրաւ յայլակերպութեան տօնին նշանակութիւնը քրիստոնէական հաւատքին մէջ իրբեւ աներկբայի ապացոյցը եւ յայտնութիւնը հանդերձեալ կեանքի իրականութեան: Անոր արժանանալու համար անհրաժեշտ համարեց բարձրանալ իմանալի Թարթնները այս կեանքին, եւ հոն պայծառակերպուիլ հոգեով եւ մտքով:

✱ 5 Օգոստոս Բշ. — Մեռելոց. Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ, ուր, քարոզեց Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. ուշադրութեան առարկայ ընելով Մովսէսի մահը հարաւ լերան վրայ. Մովսէսի բովանդակ կեանքը ի սպաս զրուեցաւ իր ժողովուրդի ազատագրման, ու զանոնք «Աւետեաց երկիրը» առաջնորդելու նպատակին. սակայն հազիւ անոր սեմին հասած կը մեռնի. չկայ պատմութեան մէջ ասկէ աւելի տխուր մահ: Սակայն մեռած ժամանակ կը տեսնէ հեռուէն Աւետեաց երկիրը: Ամէն մարդու մէջ Մովսէս մը կ'ապրի առաւել կամ նուազ. երանի անոնց որոնք իրենց հարաւ լերան գերեզմանին առջեւ, կը տեսնեն Աւետեաց երկիրը՝ երկիրքը. որ իւրաքանչիւր քրիստոնեային Աւետեաց երկիրն է: Ս. Պատարագի աւարտումին, երգեցողութեամբ եւ թափօրով ազգային գերեզմանատան մէջ հոգեհանգստեան արարողութիւն կը կատարուի ի հանդիստ հոգեւոյ համայն ազգիս ննջեցելոց:

✱ 11 Օգոստոս կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ. քարոզեց Հոգ. Տ. Հայրիկ Վրդ., քնարան առնելով «Զի եկն Որդի Մարդոյ կեցուցանել զկորուսեալս» աւետարանական խօսքը. ներկայացուց արեւելեան ժողովուրդներու քաղաքական եւ բարոյական վիճակը, եւ հրեայ ժողովուրդին բացառիկ հանգամանքը. յետոյ ճշդից տարողութիւնը «Կորուսեալ» բառին, որ Յիսուսի համար կը նշանակէր առաւելապէս քաղաքական բռնապետութեան ներքեւ կաշկանդուած մնալ. զրամի, կիրքի եւ հաճոյքի ախորժակներուն ենթարկուիլ, եւ տիրական խաւարում հոգեկան աշխարհի: Ապա՝ զիտել տուաւ թէ, փրկութեան գործը, ըստ տե-

սութեան, զիւրին կը թուի ըլլալ. բայց առիկա կարելի պիտի ըլլայ մարդկային միջոցներէ աւելի՝ աստուածային օժանդակութեամբ:

✱ 12 Օգոստոս Բշ. — Վաղեմի սովորութեան համաձայն, այսօր խումբ մը վարդապետներ եւ ժառանգաւոր աշակերտներ Ս. Աստուածածնայ եկեղեցին կ'իջնեն Ս. Պատարագի մատակցութեան համար: Եւ այսպէս կը շարունակեն երկու շաբաթ, մինչեւ Աստուածածնայ վերափոխման կիրակին: Եւ ամէն օր, հակառակ ցերեկի ամթին, օրբալայրին հեռաւորութեան, և զառիւղներու և զարվարներու պատճառած մարմնախնայ յոգնութիւններուն, միշտ որոշ թիւով բազմութիւն մը ժողովրդեան, կը լեցնէ եկեղեցին, Ս. Պատարագի մատուցման և երգեցողութեան իր մասնակցութեամբն ու հետեւողութեամբը:

✱ 18 Օգոստոս Կիր. — Ս. Պատարագ և Զեռնադրութիւն Սարկաւազայ ի Ս. Յակոբ (Զեռնադրութեան մանրամասնութիւնը և քարոզը տեսնել իրենց բաժինին մէջ):

✱ 24 Օգոստոս Շբ. — Նախասոմակ Վերափոխման, կէսօրէ առաջ, Բեթղէմէ մէջ օղափոխութեան պայծառ և սասնողութեան մէկ մասը վանք կուգայ, վերափոխման հանդիսութեանց մասնակցելու համար: Կէսօրէ վերջ ժամը 2.30ին, ամբողջ Միաբանութիւնը հանդիսաւոր երթով կ'իջնէ Գեթսեմանի. Ս. Պատրիարք Զօր Նախագահութեամբ Վերաշափառելով կը կատարուի հանդիսաւոր մատուցը Տաճարէն ներս. և ապա՝ կիրակմբ տիգ ժամերգութիւն, Նախատօնակ, հսկում եւ գիշերային ու առաւօտեան ժամերգութիւն, խումբ էր ներկայութիւնը բազմութեան, բայց կառավարութեան բացարձակ լուսմարի խիստ հրահանգին պատճառաւ, առանց հանդիսաւոր դարի (ինչպէս սովորութիւնն էր տարիներու) ամբողջ արարողութիւնները կը կատարուին յաջորդաբար, եւ իրիկնամօրն Միաբանութիւնը վանք կը վերադառնայ:

✱ 25 Օգոստոս Կիր. — Վերափոխում, առաւօտեան ժամը 8ին, Միաբանութիւնը զարմեալ հանդիսաւորապէս Զօրը կ'իջնէ, ուր, Ս. Պատրիարք Զօր զխաւորութեամբ կը կատարուի Տաճարէն ներս Վերաշափառելով մատուցը: Ս. Պատարագ կը մատուցանէ Տ. Գեորգ Վրդ. ձանրդեան թագ ի գլուխ, Ս. Կուսի Գերեզմանին վրայ: Կը քարոզէ Զոգ. Տ. Յուսիկ Վրդ., վեր առնելով Աստուածամօր առաքինութիւնները, և զանոնք հակադրելով արդի քրիստոնեայ մայրերու թերութիւններուն: Կը շնորհէ կարեւորութիւնն ու մեծութիւնը մայրութեան զաղափարին, և անոր զերն ու պատասխանատուութիւնը մարդոց երջանկացման գործին մէջ: Կը յորդորէ հայ մայրերը, նմանելու Ս. Կոյսին՝ նկարագրելով և շնորհներով:

✱ 26 Օգոստոս Բշ. — Մեծեղց. Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Զոգ. Տ. Պատկ Վրդ., «Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ ժամանակս կարճեալ է այսուհետեւ» ընթանալով:

ըսաւ, սխալ է ենթադրել և հետեւցնել այս խօսքէն, թէ Առաքեալը ձանձրացած է այս կեանքէն, ապա ընդլայնեց սա դաղափարը թէ, կեանքը կարճ կը թուի երբ լի է աշխուժութեամբ և զօր-ծունէութեամբ. կեանքը առանց աշխատանքի տաղանդութիւն է:

Ս. Պատարագէն յետոյ, թափօրով և երգեցողութեամբ շրջան մը ընելով Ազգային Գերեզմանատան մէջ, արեւելեան պատին կողմը կը կատարուի ընդհանուր հոգեհանգիստի պաշտամունքը:

— Ամեն. Ս. Պատրիարք Զայրը, այսօր, Ս. Պատարագէն վերջ, Լիբանան մեկնեցաւ օղափոխութեան համար: Ֆիզիքական անհանգստութեան պատճառաւ չէր կրցած արդէն, Վարդավառի Նախատօնակին Վերաշափառելի արարողութիւնը կատարել, իսկ վերափոխման կիրակիի ձեռնադրութիւնն ալ եկած էր աւելցնել մարմնական իր յոգնութիւնները: Անհրաժեշտութիւն մըն էր իրեն համար քանի մը շաբաթներու օղափոխութեամբ հանգիստ տալ յոգնած մարմինին:

✱ 1 Սեպտ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Լրեշտակապետ. քարոզեց Զոգ. Տ. Միւսոն Վրդ., որ վերափոխման ութերորդ օրուան առիթով, անդրադարձաւ Աստուածամօր անձին պատրաստութեան, մատնանշելով թէ, աստուածային Նախասահմանութիւնը արդիւնաւորութեամբ Ս. Կուսի անձին մէջ, որովհետեւ անկա գիտակցութիւնը ունեցաւ իր զերին եւ պատրաստեց ինքզինքը իր կոչումին:

✱ 3 Սեպտ. Կշ. — Մերցոն՝ Յովակիմայ եւ Աննայի ծնողաց Ս. Աստուածմօր եւ կանանց Իղաբերից. ի Ս. Աստուածածին, Յովսէփայ Աստուածահօր յիշատակին նուիրուած սեղանին վրայ Ս. Պատարագ մատուցը Տաճարիւ Զոգ. Տեսուչը՝ Տ. Խորէն Վրդ., ի ներկայութեան Միաբանութեան և հաւատացեալ բազմութեան:

ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐԱՊԵՏ ԱՍԼԱՆԵԱՆ

Յուլիս 17ի առտուան ժամը 8.15ին իր մահկանացուն կնքեց միաբանութեանս անդամներէն Մարիամ Մայրապետ Ասլանեան, 68ամեայ յառաջացեալ տարիքին մէջ:

Հանգուցեալը ծնունդով Բինկեանցի էր, զբարասէր և կրօնասէր. 1920ին երուսաղէմ էր եկած և ընդունուած մայրապետաց շարքին մէջ, Քսան տարիներու միաբանի իր կեանքը յօժարութեան և սիրոյ յանձնառութիւն մեղաւ, մաքուր այս ծառայութեան մէջ որոնելով իր անդաւակ ու այրիացած հոգիին մխիթարանքը, և կը մեռնի բարի անուն մը թողելով իր ետին:

Օրհնութիւն իր յիշատակին, և բոլոր անոնց որոնք իր բարի օրինակովը կ'ապրին: